







ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ. ՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ

400

լ.

ՏԱՐԵՐԻ ԳԼՈՒԽ

15 00

ամեայ

ՅՈՒՆԻՏԵՎԱՆ

ՎԻՇԱՏԱԿԻՆ

№ 3

Երան. թ. Ա ԲՈՒՂՈՎԸՆԱՆԻ.

ԳՈՐԻԼԼԱ

ԵՐ ՊԻՐԱԳ



ՊԱՏՄՈՒԺԻՒԵՆ





ԳՈՐԻԼԼԱ

ԵԿ ՌԻՔԻՑ

ՊԱՏՄԻԱԾԲՆԵՐ

1. Գօրիլլա.
2. Պատկերը.
3. Կապոյտ քարայրի լեզենդան.
4. ինքնօգնութիւն.
5. Հայլինսերից տանջւելը.
6. Արևի որդիքը.
7. Կենդանի թակարդ.
8. Զրհորի գաղտնիքը.
9. Կենդանի թաղւածներ.
10. Արդարադատութիւնը յանցագործութեան տեղում.
11. Ապացոյց.
12. Անկոչ հիւրեր.
13. Միտեր Բենդերբիի արկարը.
14. Սողոմոնի դատաստանը.
15. Անհաւատների արդարամտութիւնը.
16. Կնիքի պահապանը:

ԹՎ ի ժ 1 ի ս

Տպարան „ԿՈՒՆԻ ՏՈՒՐԱՆ“ Ընկ., Բարօնուկայեա՞փող., 14.

1913

Գ. Օ Բ Ի Լ Ա.

(Քօրէնայլից)

Ապրում էի Անգլիայի արևմտեան փոքրիկ
քաղաքներից մէկում։ Յաճախ էի յիշում անցեալ
երիտասարդական կեանքս։

Մի անգամ, բոլորովին անսպասելի, սենեակս
մտաւ. մի կարճիկ մարդ. դժւարութեամբ ճանաչե-
ցի, որ դա իմ ամենալաւ ընկերն էր, Պիտերկինը,
որի հետ երջանիկ օրեր էի անցկացրել Խաղաղ
ովկիանոսի Կօրալլեան կղզիների վրայ։

Մի քանի տարի էր, որ իրար չէինք տեսել.
ընկերս խիստ փոխւել էր։

Նա բազմադիմի կեանք էր անցկացրել. տե-
սել ու կըել էր շատ բան այդ տարիներում,
մասնակցել էր չինացիների քաֆրների դէմ մղած
կորիւներում, փղորսի էր գնացել, փղեր որ-
սացել։

Այժմ, երբ հանդիպեցինք, Պիտերկինը հա-
մոզեց ինձ, գնալ որսի, գօրիլլա բոնելու։

Գօրիլլան կապիկներից ամենախոշորն է.
ապրում է արևմտեան Աֆրիկայում, շատ կա-
տաղի է և շատ էլ նման մարդու։

Այն օրից, երբ հեռացել էինք Անգլիայից, անցել էր արդէն վեց շաբաթ, և մենք գտնուում էինք Աֆրիկայի խորքում, խափշիկների թագաւորութեան սահմանում։

Սեամորթերի թագաւորը, Զամբէեան, շատ ուրախ ընդունեց մեզ, որովհետեւ նրան ծխախոս էինք նւիրել, և տւեց մեզ մի առաջնորդ, որ գիտէր, թէ որտեղ են ապրում կապիկները։

Երկար ժամանակ չէինք կարողանում գօրիլայի հետք գտնել. երկու շաբաթ փնտրելուց յետոյ, վերջապէս բախտը ժպտաց մեզ. զետափի տղմոտ լանջին տեսանք կապիկի հետք։ Առաջ գնացինք նեղ կածանով և պարզ տեսանք գօրիլային։

Մեր առաջնորդը բարձրահասակ էր, իսկ կապիկը նրանից էլ բարձր էր իր գլխովը։ Կապիկի բարկութիւն ցայտող աչքերը, բաց բերանը գիշատիչ ատամներով՝ նրա անճոռնի դնչին տալիս էին ստամայի կերպարանք։

Պիտերկինը անսխալ նշանաձիգ էր. հէնց առաջին գնդակով ջարդեց գօրիլայի թեր։ Կապիկը անտառելի ճիչ հանեց. այդպէս կարող էր ճշալ միայն կէս-ասուն կէս-անասուն արարածը։ Շուտով նրան վերջ տւինք։

Երեք օր շարունակ օրական սպանում էինք հ'նդ կապիկ։ Իննը շաբաթից յետոյ մենք հեռացանք գօրիլաների երկրից, Աֆրիկայի անտառներից, որ զարմացրել էին մեզ իրանց տարօրինակ երևոյթներով։

Վիթխարի, միմեանց հիւսւած ծառերը, որ
զով ստւերներ էին տալիս, քաշում էին մեզ
գէպի իրենց, բայց հետևեալ դէպերը ստիպեցին
մեզ թողնել այդ անտառները:

Մի անգամ հանդիպեցինք անսովոր մեծու-
թեամբ գօրիլլայի մի հետքի. հէնց այդտեղ էլ թփե-
րի տակից դուրս թռաւ գօրիլլան: Խիտ թփերը
ծածկել էին մեր աչքից այն մարդուն, որ անվրէպ
խիեց գօրիլլային: Գօրիլլան անջնչացած ընկաւ
մեզանից երկու քայլ հեռու:

Ապա երկաց զժգունադէմ մարդը ծխացող
հրացանը ձեռքին ու խօսեց մեզ հետ վատ ան-
գլիերէն: Նա հրաւիրեց մեզ հետևել իրեն և
ճանապարհին հարց ու փորձ էր անում, թէ
նրտեղ են գտնուում արաբական գիւղերը: Ան-
ցանք մի քանի քայլ և պատահեցինք մօտ հինգ
հարիւր նեղրերի (խափշիկների):

Մեր առաջնորդը, մի բարեհողի նեղը
(խափշիկ), մռայլւեց ու շշուկով յայտնեց մեզ,
թէ այդ մարդը, որ իրեն վաճառականն է համա-
րում, հաւանօրէն ստրուկների տէր է և ստրուկ-
ներ է առնում ու ծախում: Նրա նպատակն է
բռնի ուժով հաւաքել խափշիկներին և անպաշտ-
պան մարդկանց իրեն սեփականացնել:

Երբ բաժանւեցինք այդ փորթուգալացուց,
Պիտերկինը բարձրաձայն յայտնեց, թէ հաւա-
տացած է, որ այդ պարոնը միտք ունի յարձակում
գործելու հարաւային գիւղերի վրայ և, որ մենք
պատրաստ ենք զգուշացնելու Զամբէեա թագա-

ւորին, որը մեզ այնքան ուրախ ընդունեց և
հնարաւորութիւն տւաւ հասնելու մեր ցանկա-
ցածին:

Շատ շտապ առաջ էինք դնում, բայց հրդեհը
աւերել ոչնչացրել էր արդէն ճանապարհի վրայ
շատ գիւղեր: Պարզ երեսում էր, որ թշնամին եղել
էր այստեղ և, կրակի մատնելով գիւղերը, գիշերը
տարել էր իր հետ դժբախտ խտփշիկներին. այդ-
պէս հեշտ էր օգտւել նրանց սարսափելի, անել
դրութիւնից:

Պէտք էր շտապել ազատելու Զամէեանին:

Շատ վատ ազդեց մեզ վրայ այն, որ գիւ-
շերը ստիպւած էինք քնել խոնաւ անտառում,
ուր թացութիւնից անկարելի էր կրակ անել:
Այստեղ առաջին անգամ ես հանդիպեցի վայրի
կենդանիներին վանդակից դուրս, ազատութեան
մէջ:

Չորս կողմում վառւում էին գիւղերը և կեն-
դանիները հրդեհից վախեցած ու հալածւած՝
բնազեաբար ձգտում էին դէպի ջուրը:

Ահա ընձուղտերի հօտերը մօտեցաւ լճին,
ապա երեաց չարագուշ ոնդեղջուրը, որ վա-
խեցրեց ընձուղտերին: Շուտով եկան մօտ քսան
փիդ: Այդ բոլորը ոչինչ, բայց ընկերս յանկարծ
հրացան բացեց մօտիկ ընձուղտի վերայ: Հրա-
ցանի ձայնի հետ միասին բոլոր կենդանիները
խլացրին մեզ ահարեկիչ գոռոցով: Մեր վախը
իզուր չէր, մանաւանդ երբ բոլորովին մեզ մօտ
տեսանք անտառի արքային—առիւծին:

Նրա դեղին բաշը ծածանւում էր գլխի վրայ, կրակոտ աչքերը յառել էին մեզ, իսկ կարճ փնջածայր պոչը ուժեղ շարժումով օդի էր ակօսում: Տափելով գետինը նա պատրաստում էր թոփչք գործել, կարծես յարմար ըոպէի էր սպասում մեզ վրայ յարձակելու: Մենք սարսափից սառանք...

Բայց մեր առաջնորդը ուղղեց նրան իր շեշտակի հայեացքը, առիւծը սկսեց անհանդըստանալ և ոռնոցով մտաւ անտառի խորքը: Նա կարծես հիպնոսեց առիւծին և ազատեց մեզ:

Առաւօտեան դիմեցինք դէպի Զամբէեայի գիւղը և շուտով հասանք այնտեղու Թշնամին դեռ չէր մօտեցել այդ գիւղին և մենք ժամանակին զգուշացրինք խափշիկներին: Նրանք շատ են վախում գերութիւնից:

Երբ փորթուգալացու խափշիկներից բաղկացած խումբը մօտեցաւ գիւղին, նրա բնակիչները նոյնպէս խափշիկներ, պատրաստ էին դիմադրելու: Թշնամին, այսինքն ստրկացած խափշիկները, բարձունքի վրայ յանկարծ տեսան մի կերպարանք, որ վառւում էր և հրեղէն լեզուներ արձակում: Այդ պատկերը սկսեց գոռալ, պարել և բռունցքներով սպառնաք:

Մենք իմացանք, որ դա Պիտերկինն էր: Բայց խափշիկները նրան աստւած կարծեցինք Խիստ վախեցան նրա սարառնալի շարժումներից և գիւղը թողին ու փախան զանազան կողմ:

Խափշիկների մէջ կրօնական զգացմունքը

խիստ գօրեղ է, և ամենից աւելի նրանք վախենում են աստւածութիւնից: Նրանք այս անգամ կարծեցին թէ, աստւածութիւնը բարկացել է նրանց վրայ այն բանի համար, որ նրանք կուի են դուրս եկել իրենց եղբայրների գէմ թէև ոչ կամաւոր կերպով:

Այդպէս շնորհիւ Պիտերկինի յաջող հնարագիտութեան, ամեն ինչ վերջացաւ առանց արիւնհեղութեան: Պէտք է ասել, որ նա փոսփոր էր քսել իր մարմնին: Շուտով մենք ազատեցինք և միւս գերիներին:

Սևամորթների թագաւորը, Զամբէեան, չըգիտէր, ինչպէս շնորհակալութիւն յայտնէր մեզ. ի նշան իր մեծ յարգանքի՝ նա իր քթով մեր քթերը շօշափեց. իսկ խափշիկները մեզնից առած վառողով դիմաւորում և ողջունում էին մեզ կայծաքարեայ հրացաններից արձակելով:

Այդ դէպքից յետոյ վերադարձանք Անգլիա, բերելով հետներս սպանւած կենդանիների մորթիները:

Շատ գիտնականներ էին հետաքրքրուում Գօրիլլա կապիկով: Մի քանի խօսք ասենք այդ նշանաւոր կենդանու մասին:

Ամերիկացի պրօֆեսոր Գարները շատ դիւտողութիւններ է կատարել մարդու և կապիկից եղակցութեան վերաբերեալ: Այսպէս օրինակ, նա ճանապարհորդում էր Ամերիկայի անտառներում, կապիկների լեզուն ուսումնասիրելու համար. Փոնոգրաֆով վերցնում էր նրանց ձայները, ա-

պա փորձում էր այդ ձայների ազդեցութիւնը կապիկների վրայ զանազան կենդանաբանական այգիներում:

Բացառիկ հետաքրքրութիւն է ներկայացնում պրօֆ. Գարների հետևեալ փորձը:

Նա Ամերիկայի անտառներից վերցրեց մի ջահէլ կապիկ և որոշեց կրթել նրան իր տանը ֆրէբելեան արւեստի ճշգրիտ կանոններով, որպէսզի իմանայ, թէ ինչ աստիճանի մարդկային յատկութիւն կայ այդ կենդանու մէջ։ Նա պէտք է, ի հարկէ, աշխատէր, որ տեղի չունենային շարժումների և գործողութիւնների մեքենայական կրկնութիւններ, այլ գիտակցական ըմբռնում և կամքի ազատ արտայայտութիւն։

Նա պարապում էր մի տարեկան «շիմպանզէ» կոչւած էգ կապիկի հետ խիստ կանոնաւոր և յարատե եղանակով։ Մտաւոր զբաղմունքին հետևում էին Փիզիքական վարժութիւններ, հանգիստ զբոսանք և այդ բոլորը վերջանում էր ճաշով։

Դասի նիւթ էին կազմում տարրական գիտելիքներ թւաբանութիւնից, լեզւագիտութիւնից, «շօշափելի զրոյցներ» զանազան առարկաներ, նրանց ձեր, գոյնը, ամբութիւննու փափկութիւնը որոշելու և ճանաչելու համար։

Հետևանքն այն եղաւ, որ փոքրիկ շիմպանզէն լաւ իւրացրեց 250 անգիտական խօսք և մի քանի արտայայտութիւններ։ օր. «նստիր», «ձեռ-

քով խաչ քաշիր», «թող այդ», «փակիր դուռը»,
«բեր գլխարկս» և այլն:

Նա գիտէր հարիւրից տւելի առարկաների
անուններ և ջոկում էր առարկաները անսխալ:
Նա տարբերում էր երկրաշական մարմինների,
այն է՝ քառակուսու, խորանարդի, գնդի, գլանի
մակերևոյթները անկախ նրանց մեծութիւնից ու
գոյնից: Գաղափար էր կազմել և գիտէր կարմիր,
սպիտակ, դեղին, կանաչ ու կապոյտ գոյները:

Առանձնապէս միրում էր բաց անել ու փա-
կել զանազան արկղներ և արկղիկներ: Ինչպէս
էլ դնէին արկղիկները՝ ուղիղ բերանի վրայ, թէ
կողքի՝ նա նրա շէնքից հասկանում էր, թէ ինչ-
պէս է բացւում:

Թւարանութեան մէջ նա հասաւ մինչև չոր-
սը. լաւ ճանաչում էր խնձորի և նարնջի բոլոր
տեսակները. երբէք չէր խառնում, որքան էլ գոյ-
նով ու մեծութեամբ նման կամ տարբեր լինէին:

Նրա սիրելի ձեռքի աշխատանքն էր՝ թելի
վրայ ուլունքներ շարելը:

Դժբախտաբար պը. Գարները իր հեռանա-
լու պատճառով առ ժամանակ դադարեցրեց այդ
պարապմունքները. այժմ նորից դարձել է Ամե-
րիկա և սկսել է նոյն զբաղմունքը, որպէսզի
կարողանայ համել այն սահմանին, որից այն
կողմն այլևս չի կարելի անցնել: Այդ կերպ կի-
մանանք, որ կապիկը իր կարողութիւնով կըմօ-
տենայ այն վայրենի մարդկանց, որոնք տասից
աւելի չեն կարողանում համարել:

Պ Ա Տ Կ Ե Բ

(Պրիեչարդից)

Ֆրանսիացի յայտնի պատկերահան ԱղոլՓիլիւֆորը երիտասարդ ժամանակ մի թէև փոքր բայց համակրելի դէմք էր. բայց յաջողութիւնն ու փողը շատ անգամ փշացնում են մարդկանց: Կամաց-կամաց այս գեղագէտը դարձաւ ինքնահաւան ու ամբարտաւան:

Նա լսել էր, որ ամենքը նրան մեծ գեղագէտ են համարում, ինքն էլ էր կարծում իրեն այդպէս:

Մի անգամ Բլիւֆորը գնաց Խսպանիա համագստանալու: Նա յոգնել էր Փարիզի վայելքներից ու բազմաթիւ պատէրներից: Կինն էլ, որ պաշտում էր նրան, ի հարկէ, գնաց նրա հետ:

Հասան Մալագա և իջան ամենալաւ հիւրանոցում. այստեղ զւարթանում նրանք էին բնութեան գրկում:

Անցաւ մի քանի օր: Մի անգամ Բլիւֆորը իր սենեակում մահճակալի վրայ տեսաւ մի նամակ, որ խիստ յուզեց ու բարկացրեց նրան:

Նամակը գրել էր իսպանացի յայտնի աւագակը, որ ունէր շատ պաշտպաններ ու կողմնակիցներ և որին իշխանութիւնը բռնելու ոչ մի հսարաւորութիւն չունէր: Նա ապրում էր Իսպանիայի անմատչելի լեռներում. առանձնապէս գիւղացիութիւնը համակրում էր այդ, թէև դաժան,

բայց մեծահոգի ու արդարադատ աւազակին՝
Նա թալանում էր միայն հարուստներին, իսկ աղա-
քատներին ընդհակառակը օդնում:

Դօն-Կարլոսը, այդպէս էր աւազակի անունը,
Նամակով խնդրում էր Բլիւֆորին, որ գնայ իր մօտ
անտառոտ լեռները և այնտեղ քաթանի վրայ իր
պատկերը քաշի: Նամակը գրած էր շատ քա-
ղաքավարի: Նա գրում էր, թէ ծանօթ է
Բլիւֆորի նկարչական շնորհքին և կըցանկար
ունենալ նրա վրձինով քաշած իր նկարը: Գնի
մասին չէր սակարկում և խնդրում էր պատաս-
խանը ձգել ուղիղ կէս գիշերին լուսամուտից
դուրս:

Դօն-Կարլոսը Բլիւֆորի այդ վարմունքը
համարեց մեծ յանդգնութիւն և կէս գիշերին
լուսամուտից դուրս ձգեց մի նամակ, որով սպառ-
նում էր աւազակին բռնել, բանտ նստեցնել:
Բլիւֆորի կինը վախից լալիս ու ողբում էր: Նա
երկիւղ էր կրում, թէ մի գուցէ Դօն-Կարլոսը
վրէժ կըլուծէ:

Սակայն անցաւ բաւական երկար ժամանակ
և ոչինչ չպատահեց: Ամուսինները պատրաստ-
ւում էին հեռանալ իսպանիայից. նախքան մեկ-
նելը նրաք գնացին աւերւած կարման աշտարակը
դիտելու, որ գեղագրական դիրք ունէր:

Անտառի խորքում նրանց առաջ դուրս
եկան մի քանի ձիաւորներ և ուղիղ դիմեցին
Բլիւֆորին: Նրանցից մէկը սկսեց խօսել: Նա
իւր տիրոջ, Դօն-Կարլոսի անունից խնդրում էր

գեղարւեստագէտին գնալ նրա մօտ հիւր։ Բլիւ-
ֆորը պատասխանեց, որ լսել անդամ չի ուզում
նրանց, և չի գնայ աւազակի մօտ։

Դեռ չէր վերջացրել իր խօսքերը Բլիւֆորը,
որ նրա ձեռքերը կապեցին յետել և տարան
այդ թշւառ յամառին անտառի խորքը։

Գեղագէտի կինը սկսեց օգնութեան կանչել,
բայց Դօն-Կարլոսի մարդիկ զգուշացրին նրան,
որ աղմուկ չբարձրացնէ, ոտքի չհանէ տեղային
ոստիկանութիւնը, հակառակ դէպքում այլու
ամուսնուն չի տեսնի երբէք։

Բլիւֆորին տանում էին լեռնային նեղ
անցքերով. ահը պատել էր նրա սիրտը։ Հետե-
ւեալ օրը առաւօտեան հասցրին նրան Դօն-Կար-
լոսի քարայրը։

Դօն-Կարլոսը հագել էր երկար պատմուճան,
գլխին գրել լայնափեշ մի գլխարկ, որի տակից
նիհար դէմքին անհամաձայն՝ վառւում էին մի
զոյգ կատաղի աչքեր, որոնք կատարելապէս հա-
մակերպւում էին նրա արծւէ քթին։

Նուրբ քաղաքավարի շարժումներով դիմա-
ւորեց Դօն Կարլոսը գեղագետին, ողջունեց նը-
րան, որպէս ականաւոր մի անձի։

Եղբ լսեց աւազակի փափուկ տոնը, քաղցր վե-
րաբերմունքը, նկարիչը սիրտ առաւ և կծու կեր-
պով նկատեց, թէ չի ցանկանում լսել յիմար խօս-
քեր և խնդրում է բաց թողնել իրեն։ Բլիւֆորի այդ
գրգռող վարմունքին աւազակը հանգիստ ու սառ-
նարիւն պատասխան տւեց։

Դօն-Կարլոսը պահանջում էր, որ Բլիւֆորը
Նկարէր նրա պատկերը և դրա համար տալիս էր
մի ամիս ժամանակ։ Սկզբում աւագակն ուզում
էր Նկարչին վարձատրել նրա աշխատանքի հա-
մար. այժմ նա պահանջում էր ֆրանսիայից մեծ
փրկանք Բլիւֆորի համար։

Աւագակը չմոռացաւ զգուշացնել Նկար-
չին, որ եթէ պատկերը անյաջող եղաւ կամ
դուր չեկաւ իրեն, այն ժամանակ նա կրկտրէ
Բլիւֆորի աջ ձեռքը։

Դօն-Կարլոսի աչքերը վառւում էին չարա-
խնդաց կրակով. Բլիւֆորը հասկացաւ, որ աւա-
գակը հանաք չի անում։ Նա ստիպւած էր հա-
մաձայնւել և Նկարել։ Գործի անյաջողութեան
մասին նա չէր մտածում, բայց վճռեց Դօն-Կար-
լոսի դիմագծերը, որ գիշատիչ թռչունի տպա-
ւորութիւն էին թողնում, մեղմացնել, ազնիւ
արտայայտութիւն տալ։

Ժամանակն անցնում էր աննկատելի. Նկա-
րիչն աշխատում էր եռանգուն։ Դօն-Կարլոսն
ամենայն համբերութեամբ հարկաւոր դիրքն էր
տալիս իր մարմին և երկար ժամանակ այդպէս
մնում։ Միենոյն ժամանակ նա հետաքրքիր խօ-
սակից էր։ Բլիւֆորին կերակրում էին շատ լաւ։
Նա տրանջալու ինաւունք չունէր։

Երբ պատկերը համարեա պատրաստ էր,
Նկարիչը մտքումը ծիծաղեց, որ նա այդպէս փո-
խել է Դօն-Կարլոսի դէմքի արտայայտութիւնը։

Աշխատանքի ամբողջ ընթացքում նա ոչ մի անգամ պատկերը ցոյց չէր տւել նրան:

Իի հպարտ զգացմունքով, թէ գործը կատարւած է շատ գեղեցիկ. Բլիւֆորը նկարը ցոյց տւեց Դօն-Կարլոսին: Մեծ էր նրա սարսափը, երբ Դօն-Կարլոսը դիտեց ուշի ուշով նը-կարը ամեն կողմից ու յայտնեց, որ պատկերը ոչ միայն նրան դուր չի դալիս, այլև խիստ վիրաւորում է նրա զգացմունքները:

Դօն-Կարլոսը վեր առաւ հայելին, նրա մօտ դրեց նկարը, ինքը կանգնեց հայելու առաջ:

Բլիւֆորը համոզւեց, որ չնորհալի կերպով դուրս էր բերած պատկերի նմանութիւնը կենդանի մարդուն, միայն աւագակի աչքերի գիշատիչ արտայայտութիւնը չքացել էր. կարծես խաղաղ կրօնաւորի հեզ աչքեր լինէին:

Դօն-Կարլոսը հանգիստ ասաց Բլիւֆորին, որ նա քրիստոնեայ վարդապետ չէ, այլ կողոպտիչների գլխաւոր, և այդ վիրաւորս նքի համար Բլիւֆորը պէտք է մեռնի մի քանի ժամից յետոյ. նա նոյնիսկ հրամայեց նկարչի համար գերեզման փորել:

Բլիւֆորը այլայլել էր. նա այնպէս աշխատում էր, այնքան տքնում և այժմ պիտի մեռնի դատարկ բանի պատճառով։ Յանկարծ նա որոշեց մահից առաջ խիստ վիրաւորել Դօն-Կարլոսին։

Տենգոտ արագութեամբ վերցրեց նա վրձինը և սկսեց պատկերը արագ փոփոխել։ Շուտով

նկարի դէմքը փոխւեց, մռայլ գծեր առաջ եկան. կտաւի վրայից նայում էին ուրուրի անագորուն աշըերը: Յոգնած ու ջարդւած նա բնկաւ բազկաթոռի վրայ:

Ներս մտաւ Դօն-Կարլոսը. նա զարմացած կանգ առաւ պատկերի առաջ և նոյնիսկ մի քանի քայլ յետ գնաց. «այդ ի՞նչ էք արել», բացականչեց նա: Բլիւփորը յարեց, թէ այժմ նկարը համապատասխան է իրականութեան, առաջ միայն իդէալն էր նկարւած:

Այստեղ Դօն-Կարլոսը բացականչեց, որ նա չի կարող սպանել այդ հանճարեղ մարդուն: Նա տեսնում է այդ աշխատանքի մէջ աստւածային կրակ: Սպանել իսկական գեղարւեստագէտին նշանակում է յանցանք գործել ամբողջ աշխարհի առաջ:

Պատկերն այնքան ճշգրիտ էր, որ կարծես ինքը, կենդանի Դօն-Կարլոսն էր կտաւի վրայ դիրք բռնել: Աւազակի քար սիրաը փափկացաւ, մոմ դարձաւ տաղանդի գեղեցիկ սաեղծագործութեան առաջ: Նա ոչ միայն ազատ թողեց ստեղծագործ նկարչին, այլև իր կեանքի մէջ առաջին անգամ հասկացաւ, որ մարդկութեանը հարկաւոր են ձիրքի տէր, տաղանդաւոր մարդիկ. մոռացաւ նա անճնական վիրաւորանքը, հոգին լցւեց անհուն մեծահոգութեամբ, և նա, այդ կոպիտ ու անագորոյն մարդ-գազանը, խոնարհեց հանճարի առաջ:

ԿԱՊՈՅՏ ՔԱՐԱՅՐԻ ԼԵԳԵՆԴԱՐԱԿԱՆ

(ՊԵՐՎՈՒԽԻՑԻՑ)

1530-ական թւականներին գեղեցիկ, բայց այդ ժամանակ թշւառ իտալիան ծանր օրերում էր ապրում: Հարաւից վայրենի թուրքերն ու թունիացիք էին աւերում, բանդում երկիրը, հիւսիսից՝ գերմանացիք ու ֆրանսիացիք շահատակում այդ՝ բնութեամբ չքաղ աշխարհը: Մահը թև առած սաւառնում էր իտալիայի գլխին:

Հայրէդդին Բարբարոսայի անունը սարսափ էր բերում ամենքին. նա Թուրքիայի սուլթանի վասարն էր: Նրա խմբերը թալանում էին իտալիայի ափերը և գերի վերցնում մարդկանց, յատկապէս մատաղ սերունդին:

Հայրէդդինը չէր խղճում ու խնայում ոչ ոքի. կանանց նա ծախում էր Թուրքիայի, Եգիպտոսի, Ալժիրի հարեմներին: Տգեղ կանանց և երեխաններին նա զարհուրելի տանջանքներ էր տալիս:

Արիւնարբու Հայրէդդինը նախ աւերեց Կիպրոս կղզին, տիրեց նրան և ապա նրա ճոխ ու փառահեղ ամրոցներից մէկում հաստատեց իր բնակութիւնը:

Այդ գէպքից մի քանի ժամանակ առաջ բժիշկների խորհրդով Նէսապօլից Կիպրոս կղզին էր եկել մի յայտնի ընտանիք, որ բաղկացած էր ամուսիններից և երկու փոքրիկ երեխաններից:

Մագոննա Ֆրանչեսկան թէն մայր էր, բայց
15 տարեկան աղջկայ տպաւորութիւն էր թող-
նում: Նա աննման գեղեցկուհի էր:

Մի փոթորկալից գիշեր Հայրէդգինը ներս
խուժեց այդ ընտանիքի մարմարիա բնակարանը:
Մարդուն սպանեց, երեխաներին խեղդեց, իսկ
գեղեցիկ Ֆրանչեսկային տարաւ իր ամրոցը:
Նոյն գիշերը Ֆրանչեսկան դարձաւ այդ չարա-
գործի կինը և կարճ ժամանակում նրա ամենա-
սիրելի սիրուհին:

Անցաւ մի տարի կիպրոսի գրաւումի օրից:
Ֆրանչեսկան ապրում էր շքեղ ամրոցում, որ
բարձրանում էր ժայռի գլխին. այժմ նա տէր
էր, հրամայող ու թագուհի:

Նա մի տղայ ունեցաւ Հայրեդգինից, որին
վերջինս սիրում էր շտեսնւած կրքով:

Նախկին հեզ ու խոնարհ Ֆրանչեսկան ա-
ռաջին ընտանիքին հասած անբախտութիւնից
յետոյ ըոլորովին փոխւել էր. նա կարծես վա-
րակւել էր երկրորդ ամուսնու արիւնարբու կա-
տաղի կրքերով: Երբ կանայք գերի էին ընկնում,
նա նրանց անասելի չարչարանքներ էր տալիս և
հրձւում այդ տեսարանով. Փրանչեսկան նրանցով
իր հոգեկան տանջանքների թափն էր մեղմացնում:
Նա աւելի վրիժառու էր և դաժան, քան Հայ-
րէդգինը:

Կղզու ամբողջ զօրքը գողում էր այդ էդ
վագրից, այդպէս էին կանչում Ֆրանչեսկային:

Նրա մասին էր խօսում ամբողջ իտալիան,

քայց ոչ ոք չէր իմանում, որ նա եւրոպական ժագում ունի:

Մի անգամ գարնանը Հայրէդղինի բացակայութեան ժամանակ Թունիսի էզ վազրը քըննութեան էր ենթարկում նոր գերիներին: Դըրանց մէջ կային և տղամարդիկ, և կանայք: Նըրա առաջ յանկարծ դուրս եկաւ մի երիտասարդ, որ դէմքի հանգիստ արտայայտութեամբ դիմեց թագուհուն և խնդրեց ազատ արձակել իրեն և իր նշանածին: Նա խոստանում էր մեծ փրկանք և բացատրեց թագուհուն, որ նրա նշանածը, Բիանկա Դէ-Կուրտիսը, ծնողների միակ աղջիկն է, որ նրա քոյրը վաղուց անյայտացել է...

Այդ պատմութեան ընթացքում թագուհու դէմքի արտայայտութիւնը փոփոխուում էր. երիտասարդի վերջին խօսքերին նա մի ճիչ արձակեց և հրամայեց գերիներին տանել գետնափոր անցքը: Նա ճանաչեց իւրայիններին, այնուամենայնիւ նրանց յետելից չարախինդ, հրհուաց:

Հետեւեալ օրը քրիստոնեաների Զատիկն էր: Էզ վազրը կամենում էր քրիստոնեաների դիակներով զարդարել իր բնակարանը: Երբ դիշերը վրայ հասաւ, վազրուհին դուրս եկաւ ամբոցի պատշգամբը և նրա աչքերն ուղղեցին դէպի Նէապոլ: Օղը թարմ էր ու պարզ, հորիզոնը յստակ. այդ բարձունքից նա տեսնում էր հայրենի քաղաքի տաճարները: Երկար, շատ երկար նա կանգնած էր անշարժ, ահա նա լսում է գետ-

Նախորշից համապղ ձայներ. «Քրիստոս Յարեաւ»...

Նրա հոգու մէջ մարեց չարութեան կրակը, վրէժի բոցը և ատելութեան հուրը. լսեց հայրեանի աղօթքը և նրա մէջ զարթնեց կարեկցութեան զգացմունքը, ցաւակցութիւն դէպի մերձաւորը և ցանկութիւն՝ ազատելու հարազատքրոջը Բիանկային, որ գտնւում էր գետնախորշում, նրա հետ բոլոր քրիստոնեայ եղբայրներին, որոնց քիչ առաջ ուզում էր տանջանքի մասնել:

— Մարդը վերջապէս զարթնեց նրա մէջ, և նա մոռացաւ իր հոգեկան տանջանքները:

Թագուհին գիտէր բոլոր գաղտնի գետնափորանցքերը. նա իջաւ գետնախորշը, բաց արեց պահապաններին անգամ անյայտ անցը և կամաց հրամայեց քրիստոնեաներին հետեւ իրեն:

Լարիբինթ սրահներով անցնում էին գերիները. վերջապէս նրա դէմքին փչեց մի զովքամի. պատմուճանի մէջ փաթաթւած կինը ցոյց տւեց հեռւում կարմիր կրակը, ուր սպասում էր նրանց համր խափշիկը, որին քրիստոնեաները պէտք է վստահէին իրենց կեանքը:

Պատմուճանում փաթաթւած կինը քնքոյշ գրկեց գեղեցկուհի Բիանկային, ջերմ համբոյը տւեց նրան և անյայտացաւ մթութեան մէջ:

Բիանկան նկատեց, որ այն անյայտ կինը մողեց իր զզին մի այնպիսի փոքրիկ տուփ, որ կըում են վզներին: Երիտասարդը շտապեցրեց

Բիանկային, և չնկատեց նա այդ տարօրինակ նւէրը:

Խափշիկը շուտով քրիստոնեաներին դուրս հանեց մի քարայր կիպրոսի ափին. քարայրը ծովի կողմից չէր երևում: Նա յանձնեց նրանց երեք ազատող գօտի և հեռացաւ:

Բիանկայի նշանածը վճռեց լողալով անցնել ծովի միւս ափը, մինչև Նէտապօլ, որ 35 վերստ էր, ու ձգեց իրեն ջուրը:

Պացուօլի ափին ձկնորսները ջրից դուրս բերին ուշագնաց երիտասարդին և ուշքի բերելով տարան Նէտապօլ: Այդտեղից երիտասարդը նաւ առնելով յաջողութեամբ գնաց նորից կապոյտ քարայրը և ազատեց բոլորին:

Երբ Բիանկան ցոյց տւեց մօրը՝ ստացած տուփը, մայրը ճանաչեց այն. այդ այն տուփն էր, որ նա կախել էր իր մեծ աղջկայ վզին հէնց նրա պսակին: Հասկացան, թէ ով էր եղել քրիստոնեաների ազատողը:

Քրոջը հանդիպելուց յետոյ Ֆրանցեսկան բոլորովին փոխւեց. նա սպանեց իր մարդուն, ազատւեց նրա իշխանութիւնից և իրեն նւիրեց բարեգործութեան: Այդպէս վերջացրեց վերջապէս իր տխուր օրերը այդ զարմանալի կինը:

Թող ներւի նրան, որովհետեւ աւելի լաւ է մւշտ, քան երբէք...

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆ

(ՔԷԿՈՐԱԿ)

Փոքրիկ պանդոկում խմում էր էժան գինին և հրճում իր մենակութիւնից Սեմը։ Յանկարծ նրա հետ սկսեց խօսիլ մի բարձրհասակ սևահեր պատանի, որ նստած էր նրանից ոչ հեռու։

Նա յայտնեց Սեմին, թէ զգում է, որ Սեմը հասկացաւ նրա լրտես լինելը, և շատ է զարմանում Սեմի այդ ընդունակութեան վրայ, որ թափանցում է ուրիշի հոգու խորքը։

Լսելով այդ՝ Սեմը շփոթւեց և չբացասեց, որ ճանաչել է նրան որպէս լրտես, այն ինչ Սեմը առաջին անգամն էր տեսնում այդ դէմքը և առաջ չէր էլ նկատել նրա ներկայութիւնը։

Լրտեսը առաջարկեց խմել, և նրանք միասին շարունակեցին այդ բաւականութիւնը։

Պատմեց լրտեսը Սեմին, թէ նա պէտք է բռնէ երկու վտանգաւոր գող և անհրաժեշտ է բռնել այն պահին, երբ դրանք ձեռքները տարած կը լինին ուրիշի գրպանը։ Եթէ այդ յաջողութ նըրան, նա ծառայութեան մէջ կը բարձրանայ։

Լրտեսը շուտով տւեց Սեմին իր այցետոմսը և խնդրեց նրան օգնել իրեն այդ գործում։ Սեմը կարող էր օգնել նրանով, որ հետևեալ օրը պիտի գնար քաղաքի խուլ մասը, իհարկէ, փողերը գրպանը դրած, այդ տեղ գողերը պիտի յարձակւէին Սեմի վրայ (լրտեսի տեղեկութիւն-).

ների համաձայն), իսկ ոստիկան ենթառապան պէտք է բռնէր այդ սրիկաներին:

Լրտեսը խոստացաւ նրան յիսուն ըուրվի այդ գործի աջակցութեան համար: Որպէսզի կատարեալ հաւատացնէ Սեմին, թէ չի խարում, լրտեսը նրա մատը դրաւ մի բրիլիանտազարդ մատանի:

Սեմը խոստացաւ նրան, գնալ հետեւեալ օրը և բաժանւելով՝ տուն դարձաւ:

Երբ նա պառկած անկողնու վրայ՝ հրճւում էր մատանիքով, տուն եկան և նրա հետ ապրող՝ ները՝ Պետօն ու Գիքօն: Սեմը քնած ձևացաւ, բայց նրանք զարթեցրին նրան. տեսնելով մատանին՝ հետաքրքրութեամբ հարցրին, թէ ո՞րտեղից է ձեռք բերել այդ գանձը: Սկզբում Սեմը լրում էր, բայց յետոյ բացւեց և տւեց ամբողջ պատմութիւնը:

Պետօն և Գիքօն բացականչեցին, որ այդ հաւանօրէն սրիկայութիւն կըլինի: Սեմը, յիմար է, որ հաւատացել է նրան. բրիլիանտը կարող է կեղծ լինել: Սեմը չէր լսում նրանց, վերջն անպատւեց, որ նրանք անտեղի հարցեր են տալիս և խառնւում ուրիշի գործերին, ու քնեց:

Պետօն ու Գիքօն երկար փսխում էին. նրանք խղճում էին իրենց ընկերոջը:

Միւս օրը Պետօն ու Գիքօն կեղծամ գնեցին, յարմարացրին իրենց դէմքին և գնացին քաղաքի այն մասը, ուր պիտի գար Սեմը:

Այնտեղ նրանք հանդիպեցին երկու կասկա-

ծելի մարդու, բայց ուշք չդարձրին նրանց վրայ գնում էին փողոցի մէջ տեղով. շուտով տեսան և Սեմին, որ հարբած էր ձևանում:

Արագ մօտ վազեցին Պետօն ու Գիքօն, Սեմի գլխարկը իջեցրին աչքերին և գրպանից հանեցին փողով լի քսակը, Սեմն էլ անգործ չէր. բռունցքի մի հարւած հասցրեց նա Պետօի երեսին ու գլորեց նրան գետին, իսկ Գիքօն էլ ոտքի ճարպիկ շարժումով թաւալագլոր տւեց ու ինքը սկսեց փախչել:

Այդ իրարանցումին, երբ Պետօն ու Գիքօն դեռ ոտքի չէին կանգնել, մօտ վազեցին այն երկու կասկածելի անձինք, արագ խլեցին նրանց ձեռքից քսակն ու անյայտացան:

Զարդւած, կաղալով տուն դարձան Պետօն ու Գիքօն, հայհոյում էին իրանք իրանց այդ արարքի համպը. նրանք միտք ունէին Սեմից խլել նրա քսակը, ապա ծաղրելով՝ վերադարձնել և ցոյց տալ նրա յիմարութիւնը:

Շուտով տուն եկաւ և Սեմը: Նա հպարտ դէմքով պատմում էր, թէ ինչպէս ծեծել է իր քսակը տանող գողերին: Նա պարծենում էր ու ստեր փչում: Պետօն ու Գիքօն չէին ուզում ասել ճշմարտութիւնը. միայն քթների տակ հայհոյում էին նրան: Իսկ Սեմը ուրախ էր, որ մասնակցել էր այդ յաջող կուին:

Բըիլիանտը կեղծ դուրս եկաւ, ի հարկէ:

Ահա թէ ուր է հասցնում անզգուշութիւնը,

մարդկանց չըճանաչելն ու նրանց խիստ հաւա-
տալը:

Պետօն ու Գիքօն էլ լաւ ծեծ կերան, որ
ուզում էին ծաղրել ընկերոջը:

ՀԱՅԵԼԻՒՑՐԻՑ ՏԱՆՁԻԵԼԸ

(Միգաւելից)

Երկար շաբաթներ նստած էի ինկվիզիտօր-
ների, կամ հաւատաքննիչների բանտում:

Մի անբախտ նահատակ, տանջանքի հարւա-
ծի տակ ասել էր իմ անունը, և ինձ բռնեցին:

Ինկվիզիտօրների կամ հաւատաքննիչների
մեծը քննում էր ինձ. նա ասաց, որ այժմ ինձ
կթողնի առանձին, որ ես կենդրոնանամ, տես-
նեմ իմ արածը, ատեմ ինքս ինձ ու կդառ-
նամ սուրբ եկեղեցւոյ գիրկը:

Ինձ մի ուրիշ սենեակ տարան. սկզբում ես
տարբերութիւն չեի գտնում այդ և միւս սե-
նեակի մէջ: Հետևեալ առաւօտ, երբ բաց արի
աչքերս, սարսափից ցնցւեցի: Տեսնում էի իմ
դէմքը ամեն կողմից: Պատերը, առաստաղն ու
յատակը, բոլորը հայելուց էին շինւած: Ուր էլ
նայում եմ, իմ տանջւած, մորուսով պատած ու
հիւծւած դէմքն էի տեսնում:

Այդ օրը երեկոյեան առաստաղին մի անցք
բացւեց, որտեղից մի ձեռք երկարացած՝ կերա-
կուր տւեց ինձ: Ես մտածում էի որ կարող եմ

խելագարւել: Տեսնում էի իմ ամեն մի շարժումը, դէմքիս ամենափոքր փոփոխութները: Թւում էր թէ, շրջապատւած եմ ուրուականներով:

Միւս առաւօտեան սովորականների փոխարէն, գոգաւոր հայելիներ էին դրել: Այժմ տեսնում էի ինձ այլանդակւած: Իմ միլիոնաւոր դէմքերը նայում էին ինձ. հասկացայ, որ կանգնած եմ խելագարութեան սահմանին:

Երբ առաստաղի միջով նորից անցք բացւեց և ձեռքը կերակուր մեկնեց, որոշեցի ազատւելու վերջին փորձն անել:

Յուսահատւած մի անսովոր թոկչք գործեցի և բռնեցի մեկնած ձեռքը ու կախւեցի նրանից:

Լսւեց մի հոգոց. անցքի միջից ցած ընկաւիմ սենեակը մի մարդ, դիմակը երեսին: Օգտւեցի նրա ուշագնաց դրութիւնից, հագայ նրա վերարկուն, դրի դիմակը, բարձրացայ առաստաղով և անարգել բանտից դուրս եկայ պարտէզ: Պարտիզի հեռաւոր անկիւններից մէկում բարձրացայ ծառը այնտեղից թռայ պարսպի պատը ու այնտեղից էլ ցած: Ես ազատւեցի:

Կարծում եմ, որ իմ յաջորդը, եթէ ուշքի գար, այնքան էլ լաւ չէր զգայ իրեն հայելիներով շրջապատւած: Ափսոսում եմ, որ այդ ինքը հաւատաքննիչը չէր:

Ինկվիզիցիան, որ է հաւատաքննութիւն, հոգեսոր մոլեռանգութեան տղմով պատած դատարան էր, որ հիմնել էին Հռովմա պապերը XII-րդ դարում, դատապարտելու հերետիկոսներին, որ-

պէս թէ, քրիստոնէական եկեղեցին ամբացնելու
ու ծաղկեցնելու նպատակով։ Ինկվիզիցիան յայտ-
նի դարձաւ իր տւած տանջանքների ու պա-
տիժների սարսափներով։ Օրինակ, եթէ մեղա-
դրեալը բացառում, յանձն չէր առնում իր գոր-
ծած, թէ չգործած մեղքը, անվերջ տանջանքի
էր ենթարկւում. իսկ եթէ խոստովանում էր, կամ
չարած յանցանքը իր վրայ առնում, որպէս թէ
կատարել է, դարձեալ պատժւում էր ու տան-
ջւում ի փառս Աստուծոյ։

Բաւական էր մի թեթև անապացոյց լուր,
որ տալիս էին տգէտ ու անխիղճ մարդիկ, որ-
պէսզի մեղադրեալին բռնէին ու տանջէին։ Դա
ծայրագոյն տգիտութեան ու քմահաճոյքի յայ-
տնի դարն էր։

Ինկվիզիցիան տիրում էր X||-րդ դարում
ամբողջ Եւրոպային, բացի Անգլիայից և Վերա-
ցւեց X|||-րդ դարում միայն։

Ա Ր Ե Խ Ի Ո Ր Դ Ի Ք Ը

Հին պերուանական կեանքից.
(Ա. Խ. Խան)

Հարաւային Ամերիկայի հնոց-արևի բոց ճա-
ռագայթները լուսաւորել էին տօնական քաղաքը
ուրախ ցոլքով։ Մարդիկ առանձին աշխոյժ էին
ստացել։ Մի քանիսի ականջներին փայլում էին
գունագեղ օղեր։ Համարեա բոլորն էլ շապիկնե-
րով էին։

Սպասում էին վաղւան մեծ տօնին, գահի ժառանգի, արքայի մեծ որդու մազերը առաջին անգամ պէտք է կտրէին և անուն դնէին։ Դրանից յետոյ տեղի էր սւնենալու պար ոսկէ օղակով։

Քաղաք էին գալիս օտարերկրացիներ և զանազան ցեղերի ներկայացուցիչներ։ Պերուանցիների ուշքը գրաւեց մի հանդիսաւոր երթ բաղկացած հինգ հարիւր հոգուց. դոքա բարձրահասակ ու զօրեղ զինւորներ էին, հագած շերտաւոր շապիկներ։

Հանդէսը կանգ առաւ և պատգարակի վրայից, որը տամնում էին չորս հոգի ուսների վրայ, ցած իջաւ մի ջահէլ տղայ։ Նրա դէմքը հպարտ էր, արքայազուն. սև մազերը կարճ խուզած էին. իսկ շորերը ոսկէ զարդարանքներով ցոլում էին արեի լոյսի տակ։

Դա Տիտուն էր, Այմար ցեղի կառավարչի որդին. այդ ցեղին նոր էր նւաճել Գուայեան կապակը։ Ամբոխը ճանապարհ տւեց և սուրհանդակը յայտնեց թագաւորին Տիտուի գալուստը։ Հիւրին դիմաւորելու արագ դուրս եկաւ թագաւորի ազգականը, Ուսկամայիդը, նա սիրալիր ողջունեց եկուրին և առաջարկեց հանգիստ առնել ճանապարհից իր բնակարանում։ Բայց Տիտուն խնդրեց իրեն շուտ ներկայացնել թագաւորին. Նրա ձայնի մէջ լւում էր թեթև ծիծաղ, բայց դէմքը հանգիստ էր անմատնելի։

Երիտասարդներն անցում էին պալատի շր-

քեղ ու ճոխ սրահներով։ Ուսկու փայլը ամեն կողմից շշմեցնում էր Տիտուին։ Մի մեծ սենեակում, երկար թախտի վրայ բազմել էր թագաւորը—Գուայեան Կապակը։ Նա ողջունեց հիւրի գալուստը և հարցըց Տիտուի հօր մասին։ Երիտասարդը պատասխանեց, թէ հայրը ծերացել է, իսկ ճանապարհը մինչև այստեղ բաւական երկար է, որի համար էլ հայրը ուղարկել էր նրան, ինքը չէր եկել։

Թագաւորը յայտնեց, թէ նա նշանակում է Տիտուին տօնին պարել՝ ոսկէ շղթայի գլուխն ոնցած։ ապա արձակեց երիտասարդին։

Տիտուն Ուսկայի հետ միասին դուրս եկաւ պարատից։ Ուսկան գովում ու պատմում էր, թէ հօրեղբայրը (թագաւորը) շատ մեծահոգի է։ Տիտուն լսում էր բայց նրա վայրենի սիրու ցաւում էր և տիրում։ Նա, որ մինչև օրս անպարտելի ցեղի որդի էր, ներկայիս պիտի զարդարէ իրեն յաղթողի յաղթական հանդէսը։

Նրանք անցնում էին քաղաքի փողոցներով։ Ուղում էին արդէն դառնալ Ուսկայի տունը երբ հանդիպեցին մի մեծ շինութեան։ Նրանց առաջ բացւեց մի լայն միջանցք, որի երկու կողմում կային քսան դուռ։ Ուսկան բացատրեց, թէ այդտեղ ապրում են արքայադուստրներ, որոնց վրայ հսկում են 200 աղջիկներ ցած դասակարգից։

Օրէնքով տղամարդկանց խիստ արգելում էր մտնել այդ միջանցքը և մօտենալ դռներին։

Անհնագանդը կը ենթարկւ էր մահւան պատժի: Նը-
րանք տեսնում էին, թէ ինչպէս մշակները մօ-
տենում էին դռներին, ապրանքը վեր դնում և ա-
րագ հեռանում:

Յանկարծ վեցերորդ դուռը լայն բացւեց և
հնչիւն ծիծաղով դուրս թռաւ տասնութ տարե-
կան մի աղջիկ: Նրա երկար սև մազերը հիւսւած
էին կենդանի ծաղիկներով: Նա ծիծաղում էր
մէկի վրայ, և նրա ուրախ աչքերը հանդիպեցին
Տիտուի հայեացքին: Համարձակ Տիտուն մի
քանի քայլ առաջ գնաց և կանգնեց աղջկայ մօա:

Աղջիկը ժպտում էր նրան. քաւթառ պա-
ռաւը սարսափի ձայնով ներս քաշեց աղջկան և
դուռը ամուր վրայ բերեց:

Ուսկան արտասուքն աչքերին շտապեցնում
էր Տիտուին տուն գնալ, նա բացատրում էր,
որ նրանց մահւան պատիժ է սպառնում սրբա-
տեղին պղծելու համար:

Աղջիկը հագել էր սպիտակ շապիկ դե-
ղին շրջկալով. այդ նշանակում էր, թէ նա
թագաւորական ցեղից էր, նայել նրան, օրէնքով
արգելում էր:

Երիտասարդները արագ հեռացան սրբատե-
ղից:

Տիտուն երազումն էլ հանգիստ չառաւ, նա
Ուսկայի պալատում քնած՝ երազումը տեսնում
է դեռափթիթ գեղեցկուհու պատկերը...

11

Տօնախմբութեան ամենաեռուն պահին երկու տարեկան թագաժառանգին դուրս բերին ժողովրդի առաջ. թագաւորի եղբօր որդին կըտրեց նրա մազերի հիւսը:

Հանդիսաւոր պարից յետոյ Տիտուն աննկատելի հեռացաւ դէպի նւիրական շէնքը և այստեղ սրինգով դուրս էր կանչում դեղեցկուհուն:

Ամեն գիշեր նա գալիս էր այստեղ, ածում իր սիրահարական եղանակները: Ինսերորդ գիշերը երիտասարդի կոչին դուրս եկաւ բարձրահասակ մի ստեր: Երիտասարդը մոռացաւ սպառնացող վտանգը և նետեց դէպի նա...

111.

Կապւած ձեռքերով Տիտուն ներկայացաւ թագաւորին, Արեի որդուն: Զայրութով նայում էին ամեն կողմից երիտասարդին: Թագաւորը յանդիմանում էր Տիտուին նրա մեծամտութեան, ապերախտութեան համար: Թագաւորը նշանակել էր նրան Այմարի կառավարիչ, իսկ նա՝ Տիտուն, այդ կերպ ցոյց տւեց իր երախտագիտութիւնը:

Թագաւորը Տիտուին թողեց ընտրելու արժանի պատիժ: Տիտուն առանց տատանւելու, ընտրեց մահւան պատիժը:

Երբ թագաւորն ասաց, թէ պատժի տեսակն էլ թողնում է Տիտուին ընտրելու (որովհետեւ նոյնպէս թագաւորական ցեղից էր), Տիտուն գերադասեց

Ամօր կոչւած օձի խայթից մեռնելը, քան թէ
ստրուկի ձեռքով:

Թագաւորն այդտեղ աին քաշեց, թէ նա
տխուր է, որ Տիտուն գողացաւ իրանից այն,
ինչ թագաւորն ինքն էր ուզում տալ նրան:

Արեի աղջիկները չեն կարող մարդու գնալ,
բայց Կելաչուան Արեի աղջիկ չէր. նա թագա-
ւորի հարազատ աղջիկն է. ժամանակաւորապէս
եկել էր այստեղ և պղծել սրբատեղին, այդտեղ
հրապուրելով երիտասարդին:

Այժմ նա պիտի մեռնի Տիտուի հետ միա-
սին: Երիտասարդն ընկաւ Արեի որդու ոտքերը
և աղաչում էր պատժել միայն իրեն, նա ասում
էր աղջիկն անմեղ է: Թագաւորը հրամայեց մօտ
բերել աղջկան, որ կանգնած էր ոչ հեռու, շրջա-
պատւած պահապաններով, և հարցնում է, թէ
նա կուզենայ կին լինել Տիտուին:

Թագաւորը աղջկայ սիրով լի հայեացքն է
տեսնում միայն: Ապա հրամայում է արձակել
երիտասարդի ձեռքերը, միացնում է ինքը եր-
կու սիրահարների ձեռքերը իրար և պատկում
նրանց. սակայն նոյն միջոցին յայտնում է, որ
երիտասարդը պարտաւոր է ազատել իր կնոջը ա-
հաւոր օձի օղակից:

Կիլաչուան լսելով թագաւորին, աչքերն ար-
տասւակալ ուշագնաց եղաւ. իսկ Տիտուն մեծ
դժւարութեամբ զսպեց իր զայրոյթը:

Մի քանի ըովէ անց Տիտուն հետևեց պա-
հապաններին. նրան տարան մի ժէռ քարի մօտ,

քարը դէն գլորեցին, երիտասարդին անցքով
ներս հրեցին և նորից անցքը նոյն քարով փա-
կեցին:

Տիտուն դուրս եկաւ մի ոսկէ պարտէզ. ծա-
ռերը, ծաղիկները, թռչունները, թիթեռները,
բոլորն էլ ոսկուց էին այնտեղ:

Տիտուն կանգնած էր հիացած. սակայն շու-
տով առաջ գնաց օձին փնարելու:

Վերջապէս տեսաւ զարհուրելի սողունին:
Նրա փայլուն մարմինը օղակ-օղակ ընկած էր
ոսկէ խոտի մէջ: Զարմանքի և բերկութեան մի
ճիչ էր, որ դուրս ժայթքեց երիտասարդի կրծ-
քից: Նա տեսաւ, որ օձի օղակի մէջ նստած էր
կիլաշուան, ձեռքը մեկնել էր նա իր սիրած ա-
մուսնուն և սպասում նրան: Ամբողջ պարտէզը
արհեստական էր, մետաղից էր ձուլւած և սար-
սափելի օձը:

Տիտուն այժմ հասկացաւ, թէ որքան մե-
ծահոգի և ողորմած էր թագաւորը: Նա պատժեց
Տիտուին սրբութիւնը պղծելու համար՝ ստիպե-
լով նրան սպասել ծանր պատժի, բայց երբ տե-
սաւ, որ նա պատրաստ է համարձակ դիմաղըե-
լու մահան և պատժւելու աղջկայ համար, մի-
այն թէ աղջիկը ազատ մնայ, ներեց նա նրան
և տւեց բախտաւորութիւն:

ԿԵՆԴԱՆԻ ԹԱԿԱՐԴ

(Տօն-Մէկից)

Ութսունական թուականներին մի քանի ընկերների հետ ճանապարհորդում էի Աւատրալիայի ափերում և մինչև այժմ չեմ կարող առանց ցնցումի յիշել այն դէպքը, որ սոսկավ տանջանքներ պատճառեց ինձ. այդպիսի բոպէներ կեանքումս առաջին անգամն եմ ունեցել:

Մենք կանգ առանք քաղաքից մի քանի մըզոն հեռու և ցրւեցինք՝ շրջակայքը տեսնելու, դիտելու, այդ բաւական մեծ համարձակութիւն էր մեր կողմից, որովհետև կարող էինք հանդիպել Աւատրալիական սև վայրենիներին, զգւելի միջաների և օձերի, որ վիստում էին այդ անտառներում:

Ես գնացի մօտիկ ծովածոցը. միտք ունէի ձուկ բոնելու, Շուտով դուրս եկայ առանձնացած ծովախորշի ծանծաղուտը, որտեղ տեսայ ծովային խեցիներ ու ձկներ: Ծովախորշի ափը չորս կողմից շրջապատած էր խիտ անտառով. այդպիսով կազմւել էր մի փոքրիկ լճակ:

Մտայ այդ ծանծաղ լճակը և սկսեցի ուռկանով բազմաթիւ ձկներ շպրտել դէպի ափը: Քիչ յետոյ զգացի, որ ստքերս բաւական խորն են գնացել ջրի մէջ: Ջրի երեսը բոնել էին լողացող խոտեր, յատակը չէր երևում: Ջրկ-

Ները լողում էին չորս կողմիս և ես բռնում էի
մեծ քանակութեամբ:

Ոտքս յանկարծ կպաւ մի տարօրանակ բա-
նի և մի ինչ որ բան սեղմեց ոտքս ծնկիցս վեր:
Իսկոյն հասկացայ, որ ոտքիցս բռնել է մի հըս-
կայ խեցիւ Նըա մկանունքների ոյժն այնքան
մեծ էր, որ յոյս չունէի ոտքս ազատելու նրա-
նից:

Այն ըռպէին, երբ զգացի, որ մի ինչ որ
բան ձնշում է ոտքս, ուռկանիս կոթով սեղ-
մեցի խեցիի մարմինը. այդ օգնեց նրանով, որ
խեցիի պատեանի երկու փեղը չկարողացան
վրայ գալ, միանալ. չփակւեցին: Միւս ձեռքով
զգուշութեամբ շօշափում էի խեցիի պատեանի
մակերեռյթը: Պատեանի եզրերն ալիաձև էին,
այդ պատճառով ոտքիս որոշ մասերը ազատ էին,
և ոտքիս արեան շրջանառութիւնը կանգ չէր
առել. հակառակ դէպքում ոտքս կընդարմանար
և ես պէտք է խեղուէի,

Պարսափելի ցաւ էի զգում և միհնոյն ժա-
մանակ գիտակցում էի, որ այստեղ ինձ ոչ ոք
օգնութեան չէր գայ և չէր ազատի: Ազդանշան
չէի կարող տալ, որովհետեւ հրացանս մօսս չէր.
իմ բարձրակոչ աղաղակն ու կանչը կորչում էր
ալիքների ծփանքի ու գոռնցի տակ: Զուրը քանի
զնում բարձրանում էր, մթնշաղը թանձրանում:
Գիտէի, որ ինձանից ոչ հեռու լողում էին շնա-
ձկներ և ամեն մի ըռպէ կարող էին յարձակւել

ինձ վրայ, Մահը, կարծէք, պատրաստ գլխիւ
վերև կանգնած էր:

Զուրն արդէն հասել էր ուսերիս, երբ ա-
փից հրացանի ձայներ լսւեցին, այդ ընկերներս
էին, կարծում էին, թէ ես մոլորւել եմ, ուզում
էին ցոյց տալ ճանապարհի ուղղութիւնը: Այդ
իմ տանջանքի սոսկալի բոպէներն էին, որովհետեւ
հրացանի ձայների ուղղութիւնը ցոյց էր տալիս, որ
նրանք ինձ փնտռում էին անտառում. չէին էլ
մտածում գալ դէպի ջուրը, մանաւանդ որ, ծա-
ռերը խանգարում էին նրանց ինձ տեսնելուն:
Զարչարանքս անտանելի էր, ես ջահէլ էի, սի-
րում էի կեանքը. մահը ուժից վեր մի սարսափ
էր ինձ համար:

Զուրը բարձրանալով հասել էր ծնոտիս.
այդտեղ ես յանկարծ յիշեցի որ գօտուս վրայ
դանակ ունիմ: Հանեցի դանակը, մի լաւ շունչ
քաշեցի ու կռացայ ջրի մէջ: Կտրեցի խեցիի
մկանունքների մի մասը, կոտրելով նախ պատեա-
նի եզրը ցանցի կոտով: Գլուխս դուրս հանեցի,
մէկ էլ, շունչ առայ ու նորից ջրի տակն անցայ և
կտրեցի մկանունքներից մի քանի կտոր ևս:

Խեցին այդ անդամահատումից մի քանի
անգամ ցնցւեց և թուլացաւ. ես ազատւեցի
Ռտքս կարծես չորացել էր: Շտապեցի ձեռքերիս
ու ոտքերիս վրայ սողալով, չորեքթաթ տալով
համնել մեր կայարանը, ընկերներիս մօտ:

Մի քանի օր չէի կարողանում ոտքս շարժել.

քայց այդ աննշան էր ինձ համար, քան այն բռնպէս, որ ապրեցի ջրում խեցիկց բռնւած:

Անծանօթ երկրում կարելի է հանդիպել բազմաթիւ անկանխատես վտանգների:

ՀՈՐԻ ԳԱՂՏՆԻ ՔԸ

(Նիկողայոս Լիից)

Ռայլֆ Բօրդեստօնին ես հանդիպել եմ առաջին անգամ «Արիւնհեղութեան տեղում» (այդպէս է կոչւում քաղաքացիական պատերազմի օրից սկսած), երբ 1864 թ. գիներալ Գրանտը Ամերիկայում փառաւոր յաղթութիւն տարաւ:

Այդ վաղուցւայ բան է, այն ինչ թւում է, թէ երեկ է կատարւել: Ես վտանգաւոր վէրք ըստացայ թշնամու նիզակից: Իմ կողքին գետին ընկաւ մի զինւոր, որ թեթև էր վիրաւորւած: Նա մօտ սողաց և կապեց իմ վէրքը, դա Ռայլֆ Բօրդեստօն էր: Մեզ տարան հիւանդանոց, որտեղ էինք միասին ապրում. ապա նորից եկանք մեր գնդերը և այլես իրար չհանդիպեցինք կուի դաշտում: Պատերազմը վերջացաւ: Ես ապրում էի Ռիգմօնութում, Վերգինիայի հասարակապետութեան մէջ:

Անցաւ մի քանի տարի. մի օր անցնում էի փողոցով, տեսայ մի ծանօթ դէմք. ես կանչեցի՝ Ռայլֆ, նա ճանաչեց ինձ, և մենք գնացինք նրա տունը:

Շատ խօսեցինք, թէ ով որտեղ է եղել և

Դինչ է արել: Նա ապրում էր այդ ժամանակ մեռ
նակ և ինձ առաջարկեց մի առ ժամանակ իրեն
մօտ ապրել:

Նրա տունը գտնուում էր քաղաքից դուրս և
բոլորովին առանձնացած էր: Տան չորս կողմը
ալեծուփ ծածանուում էին հացի արտերը, քիչ հե-
ռու անտառերն էին սկսուում, որտեղ կային թու-
նաւոր օձեր. առանձնապէս օձ շատ կար, ինչպէս
Ռայլֆն էր առում, հին ջրհորի չորս կողմը: Այդ
հորը փորել էր նրա հայրը, երբ առաջին անգամ
տեղափոխւել էին այդտեղ:

Միտք են ունեցել ջրհորի ջրով չորային
ժամանակ կենդանիներ ջուր տալ: Բայց ջուրը քիչ
է եղել և վատ յատկութեամբ, այնպէս որ այդ
հորը թողել են և փորել մի նորը տան մօտ, որից
և օգտուում էին մինչ այդ օրը:

Ես սիրում էի օձ որսալ և առաջարկեցի
Ռայլֆին գնալ անտառ: Բանից դուրս եկաւ, որ
Ռայլֆը դեռ անտառ չէր գնացել այն օրից, երբ
կորցրել էր այնտեղ այն գանձարկղիկը, ուր պա-
հումէին նրա պառաւ մօր ամուսնութեան վկա-
յականն ու այն վաւերագիրը, թէ այդ անտառը
պատկանում է նրան:

Մինչև այդ ժամանակ Ռայլֆը չէր չորա-
ցրել անտառի ճահիճները և ոչ էլ կտրել էր
ծառերը, որովհետեւ հարեաններից մէկը նոյնպէս
տէր էր կանգնել անտառին: Երկու կողմն էլ ո-
րոշել էին չօգտուել անտառից: Իմ հարցին, թէ

նոքա ինչպէս չեն գտել արկղիկը, Ռայլֆը պատմեց հետևեալը.

1864 թ., երբ Հիւսիւսային Ամերիկան կըռ-
ւում էր Հարաւայինի հետ, թշնամու բանակը
դտնւում էր հէնց այն վայրում, ուր Ռայլֆի
տունն էր: Ցածախ շրջում էին այդտեղում
լրտեսներ ու խուզարկուներ, Ռայլֆի եղբայրը մի
տասը տարեկան երեխայ, մօր հետ իրենց անա-
սունները թաքցնում էր անտառում: Անասուն-
ներին ծախում էին միմիայն իրենց զօրքին և
ոչ թշնամուն:

Մի անգամ բաւական մեծ դումար ստացաւ
պառաւը, ծախած կենդանիների համար. այդտեղ
յանկարծ երեացին պատառուած շորերով եր-
կու մարդ, որ միտք ունէին պառաւից փողը
խլել: Պառաւը հասկացաւ նրանց միտքը և համր
ձեացաւ. նա սպասում էր, որ մէկը կը պատահի
և կազատի իրան:

Փողերը համբերութիւնից դուրս եկան, պա-
ռաւին դռան մօտից դէն ձգեցին և մտան սե-
նեակ: Նա դարակից խլեց արկղիկը, որի մէջ
դրւած էին վաւերագրերն ու փողը և դրեց փոքր
որդու փեշի տակ: Երեխան արագ դուրս թռաւ
տնից և վազեց անտառի խորքը: Փողերը նկա-
տեցին երեխային:

Երեխան երբ տեսաւ, որ իրեն հետևում են,
անցաւ հին ջրհորի մօտով, արկղիկը նետեց հորը
ու շարունակեց առաջ վազել. նա յոգնեց ու ընկաւ
խոտերի մէջ: Այդ պահին գնդակն անցաւ նրա-

ականջի կողքով. բայց երեխայի անշարժ մնալը փրկեց նրան:

Սրիկաները տեսան, որ երեխան արկղիկը ձգեց հորը, որոշեցին հանել այն: Առանց երկար ու բարակ մտածելու նրանցից մէկը ժանգոտած երկաթէ լարով կախւեց հորը: Քիչ անց սարսափելի աղաղակներ լսւեցին հորի խորքից: Պատճառն այն էր, որ օձերը շրջապատել էին անբախտին և անվերջ խայթոցներ էին հասցնում նրան: Նրա աղաչանքին ու լացին, որ դուրս հանեն նրան հորից, ընկերները ականջ չէին դնում, այլ ստիպում էին գտնել արկղիկը: Վերջապէս, երբ նրանք տեսան, որ ընկերը արկղիկը դուրս չի բերում և իրենք էլ կարող են բռնւել, թողին ու փախան:

Սակայն մի խումբ զինւորներ, որոնց ծախել էր պառաւը իր եզները, բռնեցին աւազակներին: Նրանք հորից դուրս հանեցին և միւսին, որն իսկոյն մեռաւ. Նրա ամբողջ մարմին ծածկւել էր օձի թոյնով:

Այդ դէպքից յետոյ Ռայլֆը այլևս չէր զընացել անտառ և ոչ մի կերպ չէր համարձակւի հորը մտնել, թէկուզ նախազգուշացուցիչ միջոցներով ու պատրաստութեամբ:

Քիչ մտածեցի ես և ասացի Ռայլֆին, թէ անպայման ձեռք կըքերեմ արկղիկը: Գնեցինք մի մեծ աման ծխախոտի տերեներ և ուղեորւեցինք անտառ, դէպի հորը: Գիտէի, որ օձերը չեն դիմանում ծխախոտի ծխին:

Ես նայեցի հորի մէջ և տեսայ մեծ քանակութեամբ օձեր, որոնք գալարուում էին յատակին և պատերի երեսին. Նրանց մէջ էր և վշշան օձը. որ լողում էր հոտած ջրի մէջ, շապիկը հեշտ փոխելու համար. Երբ օձերը շապիկ են փոխում, նրանց թոյնը աւելի ուժեղ է լինում:

Վառեցի ամբողջ ծխախոտը և ամանով կախեցի հորի մէջ, նախօրօք ի հարկէ ջուրը մաքրելուց յետոյ: Ապա հորի բերանը փակեցինք: Մի ժամից յետոյ, երբ բաց արինք հորի բերանը, օձերը բոլորն էլ խեղդել էին ծխի մէջ:

Մաքրեցինք հորը օձերից, և ես մտայ այնտեղ արկղիկը փնարելու. բայց արկղիկը յատակին չկար: Երբ ուզում էի վեր բարձնանալ, աչքս ընկաւ պատի մի խորշի, որտեղից դուրս էր ցցւած մի սատկած օձի պոչ:

Ուզեցի օձը վերցնել ժողովածուի համար և յանկարծ ձեռքիս տակ զգացի մի քառակուսի առարկայ: Մեծ էր զարմանքս, երբ վերցը այդ և տեսայ, որ արկղիկն էր:

Պատահաբար նա ընկել էր այդտեղ. Եթէ դիտմամբ ձգէիր, դժւար թէ արկղիկն ընկնէր այդ խորշը:

Անչափ ուրախացաւ Ռայլֆը. պառաւ մայրը չգիտէր ինչպէս ինձ շնորհակալութիւն յայտնէր:

Այժմ նրանք ձեռք բերին անտառի սեփականութեան իրաւունքը և այն գիտակցութիւնը, թէ արդարութիւնը միշտ յաղթում է:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԵՈՒ, ՏԵՂՈՒՄ

(Օվեն Փլիվերից)

Շատ անգամ եմ լսել տրտունջներ, թէ մեր դատարանները խիստ դանդաղ են գործում. սակայն դատարանի արագութիւնը շատ անգամ տիսուր հետևանքներ ու սխալներ է ունենում:

Կաշւիս վրայ եմ փորձել դատարանի արագ գործելու հետևանքը և հազիւ էր, որ զոհ չդարայ այդ դէպքին:

Երբ ջանէլ էի և ապլում էի Լոնդոնում, փոքր եղբայրս աշխատում էր Կալֆորնիայի հանքերում: Նա մի անգամ հիւանդացաւ, և ուզում էր գալ Լոնդոն, լսելով այդ՝ ես ուղերւեցի Ամերիկայ և երեք շաբաթից յետոյ հասայ այնտեղ. գիշերեցի Պերիս կոչւած դիւզում.

Ծառաստանը ձգւում էր հանքերի ուղղութեամբ, որտեղ աշխատում էր եղբայրս: Միւս օրը դուրս եկայ գիւղից, ճանապարհը ինձ անծանօթ էր. երկի ես սխալւեցի, գնում էի անհարթ տեղերով. կառքս, որով գնում էի՝ կոտրւեց. պատահեցի մի մետիսի, գնեցի նրանից մի գեղեցիկ զարդարւած ձի, շատ էժան: Նստեցի այդ ձին և գեռ չէի անցել մի վերստ, երբ շրջապատեցին ինձ մի քանի ձիաւորներ. նրանք յայտնեցին ինձ, որ ես կախւելու եմ, որովհետեւ տեղային օրէնքով գողը մահւան է դատապարտում: Նըրանցից մէկը սակայն առարկեց ընկերներին, թէ

Նոր օրէնքով նրան պէտք է նախ կոմիտէտի քննութեան առաջարկեն: Ես միշտ ասում էի, որ ձին չեմ գողացել, այլ առել եմ, բայց ականջ չէին դնում: Շուտով հասանք մի քանի փայտէ տների: Զեռքերս կապած ես ներկայացայ նրանց գլխաւորին—գնդապետին և միւս դատաւորներին. գլխաւորը սրածայր մօրուսով, ալեոր մազերով, բայց կորովի մի մարդ էր: Նրանք չլսեցին իմ առարկութիւնները և միաձայն վճռեցին՝ ինձ կախել ձիազողութեան համար. մանաւանդ որ ձին կոմիտէտի անդամներից մէկինն էր:

Գնդապետը հրամայեց նոր պարան բերել և մի բաժակ ըմպելիք տալ ինձ նեարդերս ամրապնդելու համար: Սարսափն ինձ կալաւ, անխուսափելի էր մահը: Բայց այդտեղ մի բարձրահասակ, քիթը ներս ընկած ու տգեղ մարդ գուրս եկաւ և յայտնեց, թէ ինձ բերել են քննութեան համար. նախ քննել, ապա պատժել, պահանջեց նա:

Գնդապետն ակամայ տւեց մի քանի հարցեր, թէ որտեղ եմ գիշերել և երբ եմ դուրս եկել հիւրանոցից:

Պատմեցի, որ գիշերել եմ մօտիկ քաղաքում. ստացել եմ առաւօտեան փոստը և ճանապարհ ընկել ժամը եօթին: Որպէս ապացոյց ցոյց տւի ստացած նամակը:

Նրանք համոզւեցին իմ ասածիս, նամակի վրայի փոստի կնիքից:

Բանից դուրս եկաւ, որ ձին գողացել էին առաւօտեան ժամը չորսին, երբ ես քնած էի եղել իմ համարում: Իմ անմեղութիւնը ակնյայտ էր: Ընդհանուր համաձայնութեամբ արդարացրին ինձ:

Այն բարձրահասակ երիտասարդը, որ ինձ պաշտպանեց՝ առաջարկեց առաջնորդել ինձ մինչև հանքերը և գնդապետին խնդրեց, որ մեզ տան ամենալաւ ձին:

Մենք նրանից բաժանւելիս՝ նա ինձ խորհուրդ տւեց շուտով վերցնել եղբօրս և հեռանալ երկաթուղով, որպէսզի երկրորդ անգամ չընկնենք կոմիտէտի ձեռքը:

Ես նրան չհասկացայ. բայց երբ նա բաւական հեռացաւ, յետևիցս ձայն տւեց, թէ նա գիտէր իմ անմեղութիւնը, որովհետեւ ինքն էր ձին գողացել և ծախել սեմիտին, իսկ այժմ տանելու է այն ձին, որի վրայ նստած նա առաջնորդում էր ինձ:

Ահա թէ ինչու առհասարակ վատ են զինուորական դատարանները, ուր ամենայն արագութեամբ որոշում են մարդկանց բախտը: Արագութիւնը միշտ իր հետ բերում է և մեծամեծ սխալներ: Զարմանալի չէ, ուրեմն, եթէ վճռած է բարեփոխել այդ դատարանները:

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂԻԱԾՆԵՐԸ

(Ժ. Լենօսթից)

Մեր, ինչպէս և որսորդներից շատերի, սիրառը քարացել էր: Դժւար էր ամենատարօրինակ պատմւածքներով անգամ մեզ վրայ տպաւորութիւն գործել...

Ֆրանսիայի հիւսիսում ընկած է մի դարաւոր հսկայ ամրոց. այդտեղ հաւաքւեցինք մի անգամ ընկերներով: Դրսում թիվի-բորան էր. որսից նոր էինք վերադարձել, բոլորել էինք վառարանի շուրջը, անուշ տաքանում ու սարսափելի պատմութիւններ անում:

Այդ բոլորը անհաւատալի արկածներ էին, որ մեզ վրայ չէին ազգում. ապա ընկերներից մէկը ուզեց մի գէպք պատմել, որ իրօք եղել էր:

XVIII-րդ դարի կէսին՝ երիտասարդ Վիկոնտ Ռաբայշտէյնը ճանապարհորդում էր Դոֆինէ գաւառում և իր ընկերների հետ այցելեց դարաւոր Մօնտենգիւր ամրոցը: Այդ մոայլ ամրոցը մի ժամանակ պատկանում էր դաժան բարօն Դեղարդէին: Պատմում էին, որ այդ ամրոցում շատ անգամ երեսում էին ուրւականներ, տեսիլներ, հրէշ պատկերներ և վերջին տարին այդտեղ ոչ ոք չէր ապրում:

Երիտասարդների այդ խումբը, որ եկել էր այդտեղ զւարճանալու, հարց ու փորձ էր անում

ծերունի պահապանին ամրոցի մասին, թէ ինչու
այդտեղ մարդ չի ապրում:

«1715 թւին այստեղ ապրում էր Պրակօն-
տաների նշանաւոր ընտանիքը, որ բաղկացած
էր երկու ամռափններից և Լիւսի անունով մի
աղջկանից, սկսեց պահապանը:

18 տարեկան էր գեղեցիկ ու հեղ Լիւսին,
երբ նրան մարդու տւին. հարսանիքը կատարում
էին Մօնտաեգիւլում:

Վաղուց ամրոցը չէր տեսել այդպիսի ու-
րախութիւն: Հարեան ամրոցներից հաւաքւել էր
երիտասարդութիւնը: Ժամերգութիւնից յետոյ,
բախտաւոր զոյգը, ծնողներն ու հիւրերը սեղաւ-
նի նստեցին: Լիւսին փայլում էր ուրախութեամբ
և հայրենական բրիլիանտներով: Խրախճանու-
թիւնը շարունակւեց մինչև սկսեցին պարերը:
Ապա սկսեցին պահմտոցիկ կաղալ:

Ամրոցը խիստ մեծ էր և յարմար այդ հե-
տաքրքիր խաղին: Հնչեղ ծիծաղը զգացնում էր
կիսախաւար միջանցքները:

Երբ շատերը յոզնեցին վազելուց ձայն տը-
ւին հաւաքւել պատշգամբում, չանցաւ մի լո-
պէ, ամենքն էլ այնտեղ էին. միայն Լիւսին չը-
կար: Տիկին Պրակօնտալը — մայրը, կարծում էր,
թէ Լիւսին շատ լաւ իմանալով ամրոցի ամեն
մի անկիւնը՝ ամենից յաջող էր պահ մտել:

Սակայն ահաւոր էր սարսափը, երբ ամբողջ
ամրոցը փնտրելուց յետոյ չըդտան նրան, այդ
նորսապսակ գեղեցկուհուն:

Մնում էր Ենթադրել, թէ երեի Լիւսին դուրս է եկել և ընկել չարագործների ձեռքը, որոնք փախցրել են, տանելով նրա հետ և այնքան թանգարժէք իրերը:

Անբախտ մայրը կարգադրեց ամրոցի առաջ մարմարիօնէ խաչ կանգնեցնել այս վերտառութեամբ. «Լիւսի Դը-Պրակօնտալ. 1715 թ.»:

Ուրախ հարսանիքը ողբերգութեամբ վերջացաւ:

Այդ օրւանից ոչ ոք չի ապրում ամրոցում, վերջացրեց իր պատմութիւնը պահապանը:

Մարայշտէյնը լսեց այդ պատմութիւնը. մի անսովոր զգացմունք քաշեց նրան դէպի մարմարիօնէ խաչը: Նա պատկերացնում էր ջահել շիկահեր աղջկան, երբ մօտեցաւ առւակին, որի լանջին բարձրանում էր խաչը, նրան թւաց, որ նա տեսնում է շէկ մազերի մի փունջ:

Տեղացող կարկուտը միառժամանակ պահեց երիտասարդ խմբին Մօնտեգիւր ամրոցի մէջ: Բարի պահապանը կերակրեց նրանց, այն ամենով, ինչ Աստւած տւել էր:

Մարայշտէյնը նստել էր մտախոհ. նրա ուղերի մօտ քորւում էր մոխրագոյն դուրեկան կատուն: Նա չհեռացրեց կատւին, շոյում էր նրա փափուկ մազերը:

Անձրել թափւում էր հեղիղի նման. խումբը որոշեց պահմտոցի խաղալ, ինչպէս խաղացել էին անբախտ Լիւսիի հարսանիքին:

Վազգոցը ուրախութիւն բերեց մտածկոտ

Ծաբայշտէյնին: Հրհողոցով վազվում էին երիտասարդները ամբողջ ամրոցում, կենդանութիւն տալիս այդ մռայլ շնչքին:

Երբ Ծաբայշտէյնը ուզում էր թաք մտնել, նրա յետեից մէկը վազում էր. նա իջաւ մութ միջանցքը և պահեց դռան մօտ, այդ դուռը բացեց գէպի յետ. նա անցաւ նրա յետեր. դուռը արագ վրայ խփւեց և Ծաբայշտէյնը մնաց մի նեղ ու մութ տարածութեան մէջ, ուր օդի պակասութիւն զգաց, կարծես խեղդւում էր այդտեղ: Նա սկսեց դուրս գալու մի ելք փնտռել: Զեռքը կպաւ մի ուրիշ դռան օղակի, որ բացւում էր դէպի ներքնայարկը: Արագ մտաւ նա այնտեղ. նրա յետեից դուռը մեծ թափով վրայ եկաւ ու փակւեց:

Այդ սենեակում նա տեսաւ բազկաթոռի վրայ նստած մի կին, առաջին դրւած մի գիրք. բազկաթոռը գտնւում էր սենեակի մի անկիւնում: Կնոջ դէմքի անշարժ լինելլ անհանգստութիւն պատճառեց երիտասարդին, վերջինս մօտեցաւ նրան և ի՞նչ է տեսնում. դիակ էր այդ, որը քարացել, մումիա էր դարձել: Դէմքը մոմանման էր ու հանգիստ, աչքերը փակ, ձեռքերը յենւած էին բազկաթոռի թեքերին: Կապոյտ շորերը խտւարել էին, թանգարժէք իրերն ու զարդերը մթագնել:

Դա կենդանի թաղւած լիւսին էր:

Ծաբայշտէյնը դիմեց գէպի դռները, բայց ոչ մէկն էլ չկարողացաւ բաց անել: Նա կանչում

էր, աղաղակում, բայց ոչ ոք նրան չէր լսում։
Մի փոքրիկ լուսամուտ, որ նայում էր խոպան
բակը, երկաթէ հաստ ցանցերով բռնած էր։

Այստեղ Ռաբայշտէյնին սպառնում էր դան-
դաղ մօտեցող սովամահը, նա մտածում էր, որ
կարող է խելագարւել. շատ աղաղակեց, շատ
կանչեց, բայց իզուր. ոչ ոք չէր լսում, ոչ մի
տեղից օգնութիւն չէր կարող գալ։ Նա Լիւսիի
հետ կենդանի պիտի թաղւէր։ Յոգնած ու տանջ-
ւած նա ընկաւ յատակին ու քնեց։

Առաւոտեան սարսափով զարթնեց անբախտ
Ռաբայշտէյնը։ Ահա նա ներքնայարկի անկիւնում
տեսնում է երկու փայլուն կէտ։ Նա մօտ գնաց
և տեսաւ, որ երեկւայ իր ոտքերի մօտ փայլող
կատուն էր։

Ազատելու յոյսը զարթնեց Ռաբայշտէյնի
սրտում. նա արագ վազեց կատւի մօտ, բռնեց
նրան և կապեց նրա ոտքից իր թաշկինակը։ Կա-
տուն մումուալով թռաւ պատի վրայ և ցանցաւոր
լուսամուտից դուրս ելաւ։

Մինչ այդ Ռաբայշտէյնի ընկերները երկար
փնտռելուց յետոյ յուսահատւել էին գտնել նրան։
Վերջապէս տեսան կատւին, նրա թաշկինակի
հետ միասին։ Հետեւեցին, թէ կատուն ուր կարող է
մտնել. գտան ցանցաւոր լուսամուտը, քանդեցին
պատը և ուշագնաց Ռաբայշտէյնին հանեցին այն-
տեղից։

Այդ կերպ յայտնի դարձաւ և Լիւսիի տը-
խուր պատմութիւնը։

Բանից գուրօ եկաւ, որ այդ սարսափելի, ամենքի համար անմատչելի գետնայարկում ապրում էր ամենքից ծածուկ, ամրոցի դաժան ու եղեռնագործ տէրը, որին գտան այդտեղ և դատապարտեցին նրա աններելի յանցանքների համար:

Կենդանիների հետ սիրով վարւելը շատ անդամ մեծ օգուտ է բերում մարդկանց:

Ա Պ Ա Ց Ո Ց Ց

(Թ. Գերմանից)

Զինւորական արշաւախումբը գտնւում էր վայրենիների երկրում։ Խմբի հրամանատարն էր գնդապետ Վիրար. Նա շատ անհանգիստ էր և զրգուած, որովհետև նրա գնդի մէջն էր և արքայազն Մանգէյմ-Քաջը, այդ մարտիկ երիտասարդը։

Դեռատի արքայորդին յաճախ մասնակցում էր այն խմբերին, որ գուրը էին գալիս բանակից շըջապատը զննելու, հետազօտելու։ Վիրար վախենում էր, որ իր հսկողութեանը յանձնած երիտասարդը, որը Եւրոպայում բոլոր թագաւորող տներին արիւնակից էր, կարող էր ենթարկել վայրենիների յարձակումներին։

Երբ փոքրիկ Վիլհելմը զնում էր սարերը և ուշանում, սպաները ամբողջ ժամերով փնտում էին նրան։ Սկզբում այդ առանձին բաւականու-

թիւն էր պատճառում ամենքին, բայց իւրաքանչիւրն ունէր իր գործը, իր որոշ աշխատանքը. շուառվ ամենօրեայ այդ պտառւմները ձանձրացրին ամենքին:

Մի անգամ արեն արդէն մօտ էր հորիզոնին, իսկ արկածասէր արքայորդին դեռ չէր դարձել բանակ: Գնդապետը հրամայեց երկու սպայի, փնտաել նրան:

Երբ սպաները հեռացան գնդապետի մօտից, նրանցից մէկը, Բերդ անունով, առանց քաշելու սկսեց գանգատել, որ ամեն օր ստիպւած են լինում փնտոել այդ անհնազանութ, ուրիշն չլսող արքայորդուն: Նա հաւատացնում էր, որ երիտասարդն այժմ հաւանօրէն, անհոգ, ծաղիկներ է հաւաքում, չի էլ մտածում, թէ մարդիկ նրա համար անհանգիստ են:

Կրառւան ընդհատեց ընկերոջը լուրջ նկատումով, թէ սարերում վայրենիների հետ շատ հնարաւոր է ընդհարումը. մանաւանող որ վառ երեսկայութեան տէր գահաժառանզը այնքան փափազում էր հանդիպել վայրենիներին: Սպաների պարտքն է շուառվ գտնել արքայորդուն. ապա կրառւան աւելացրեց, որ եթէ որևէ վտանգ սպառնար արքայորդուն և իրենք ազատէին նըրան, ծառայութեան մէջ կըքարձրանային, և նոր աստիճաններ կըստանային:

Այդպէս զրուցելով սպաները սարերը բարձրացան. այսաեղ նրանք բաժանւեցին տարբեր

կողմերի վրայ. նախօքօք պայմանաւորւեցին իրար նշան տալ սուլոցով

Կրառաւութեաւ երկար կիրճը, անցաւ մի քանի ժայռ և յանկարծ լսեց աղաղակներ։ Մի բողէ չանցած նա տեսաւ մի սպայ, որ ուղեկցում էր արքայորդուն. սպան արիաբար պաշտպանուում էր հինգ վայրենիների յարձակումից։ Գետնին ընկած էր սկամորթների մի կոյտ, որոնց մէջ կրառաւութեց գահաժառանգի դըժդոյն դէմքը։

Կրառաւուն ամենայն արագութեամբ յարձակւեց թշնամու վրայ, առաջին սպան այդ պահին վայրենու ուժեղ հարւածից գետին տապալւեց։ Ատրճանակի մի քանի հարւածներով կրառաւութեամբ ստիպեց վայրենիներին յետ նահանջել։ Նա դիակների միջից դուրս քաշեց գահաժառանգին և համոզելով, որ երիտասարդը դեռ շնչում է, գիրկն առաւ նրան և մեծ դժւարութեամբ յետ դարձաւ դէաի բանակը։ Վայրենիները պահ մի տարակուսանքի մէջ էին. սակայն շուառով ուշքի եկան և նետերի տարափ էր, որ տեղում էր կրառաւի գլխին։ Վէրքերի վրայ նոր վէրքեր էին բացւում ու կսկիծ տալիս. սպան հազիւ հազ ոտքերը փոխում էր։

Սարի յետեկից վերջապէս երկաց Բերգը, որ գալիս էր՝ լսելով ընկերոջ սուլոցի ձայնը։

Վայրենիները տեսնելով նոր սպային, փախուսափ դիմեցին։

Կրառւսը գահաժառանգին յանձնեց Բերգին,
ինքը ուշագնաց ընկաւ գետին:

Գնդապետը դիմաւորեց Բերգին շատ ողոր-
մած հոգով. ընկերները շնորհաւորում էին Բեր-
գին և ձեռքը սեղմում:

Կրառւսի վերքերը վտանգաւոր էին. նա ուշ-
քի չէր գալիս: Բերգն այնպէս էր ցնցւել կա-
տարւած դէպքով, որ սկզբում ոչինչ չէր կա-
րողանում պատմել:

Ամենքն էլ հաւատացած էին, թէ արքայոր-
դուն, որ թեթև վերք էր ստացել, ազատել է
Բերգը:

Սկզբում Բերգը չէր հասկանում, որ Կրա-
ռւսի քաջագործութիւնը ամբողջովին վերագրում
էն իրեն: Մի քանի օրից յետոյ նրա մէջ նա-
խանձը շարժւեց: Ինչու նա չպիտի ազատած
լինէր գահաժառանգին: Ծառայութեան մէջ պիտի
բարձրանայ Կրառւսը, իսկ ինքը ոչինչ չի ստա-
նալու:

Ամենքը Բերգին առանձին համակրանքով էին
վերաբերւում, Կրառւսը չէր առողջանում. ահա
այդ ամենը սիրտ տւեց Բերգին, ոչ ոքի չպատ-
մել ճշմարտութիւնը, և իրեն պահել ընկերոջ
արիութիւնը:

Ժամանակն անցնում էր. Բերգի համար
ամօթ էր այդքան ուշ բաց անել իսկական գոր-
ծը: Գնդապետը մի անգամ կանչեց նրան իր
մօտ և առանձին շնորհակալութիւն յայտնեց, որ
նա մեծ ծառայութիւն արեց ամբողջ գնդին:

Բերգը լուռ մնաց, ընդունեց գովեստը:

Կրառւսը կամաց-կամաց լաւանում էր, միւ
առաւաօտ նա Բերգին իր մօտ կանչեց:

Շեշտակի, խիստ հայեացքով դիմաւորեց
նա Բերգին. անմիջապէս հորց տւեց եղած թիւ-
րիմացութեան մասին, որ առաջ էր եկել Բերգի
լուռ մնալուց:

Շփոթւած Բերգը կամաց մըմնջաց, թէ
ամենքն էլ կարծում էին, որ Կրառւսը կըմեռնի
և նս ափսոսում էի, որ այդպիսի մի յաջող գործ
ի զուր պիտի կորչէր:

Կրառւսը դառն ժպտաց՝ նկատելով, թէ
Բերգը ուզում էր գողանալ ուրիշ կատարած
ծառայութիւնը:

Թուլահոգի Բերգը սկսեց աղաչել Կրառւ-
սին, որ սա ճշմարտութիւնը բաց չանէ, որի հա-
մար Բերգին զօրքից կըհեռացնէին: Սակայն
Կրառւսը մնաց անսղոք և հաստատ իր խօսքին,
թէ գործի ճշմարտութիւնը յայտնի կըդարձնէ:

Բերգի գոյնը փոխւեց. նա մօտեցաւ հիւան-
դին և կամաց շընջաց, թէ ինքը ստիպւած կըմին
ատել Կրառւսին, կռւել նրա դէմ, թէ նրան աւելի
շուտ կըհաւատան, իսկ Կրառւսի խօսքերն հիւ-
անդի զառանցանք կըհամարեն:

Կրառւսը սառն նայում էր այդ փոքրոգի
երեխային. երբ նա դուրս էր գնում, յետեկից
ասաց, որ այդ բանի համար նրան չի ների և
կաշխատի փոխարէնը վճարել:

Անցաւ մի տարի. արշաւախումբը դարձաւ
Եւրոպա:

Կրառւսի վէրքերը առողջացան, բայց ցաւերը շարունակում էին. նա ոչ ոքի չյայտնեց այն ծանր բեռի մասին, որ ճնշում էր նրա հոգին. նա դարձաւ մելամաղձու ու տխուր և երբէք չէր ժպտում:

Մի անգամ մի ծանօթ լնտանիք հրաւիրեց նրան հիւր: Գիտէր կրառւսը, որ այնտեղ շատ հիւրեր կըլինեն, դրա համար էլ սիրով չէր գնում, մարդիկ կըծանրացնէին հիւանդի գրութիւնը:

Ճանապարհին գնացըի վագոնում կրառւսը պատահեց թերգի մօրը և պատահական կերպով ծանօթացաւ նրա հետ: Այդ կինը ևս հիւր էր գնում նոյն տունը:

Մայրը երկար ժամանակ խօսում էր որդու մասին, պատմում նրա յաջողութիւնների մասին, պարծենում նրա ազնւութեամբ ու գեղեցիկ հոգեկան յատկութիւններով: Նա հաւատում էր, թէ որդին եզակի մի անձնաւորութիւն է և բոլորովին անընդունակ չար գործերի: Աստւած ոչ անէ, եթէ մի օր նա լսի և տեսնի իր որդու մասին կեղծ ու խարդախ վարմունք, այդ օրը կըլինի նրա անհուն թշւառութեան ու անբախտութեան ժամը:

Կրառւսը լսում էր այդ միամիտ բախտաւոր կնոջը ու լռում:

Տուն հասնելով կրառւսը տեսաւ շատ հիւրեր. հանդիպեց, ի հարկէ սառն կերպով, նաև

Բերդին, որի գործերը վերջին ժամանակները շատ յաջող էին:

Այդաեղ էր և արքայորդի Մանգէյմը:

Ամբողջ իրիկւան ընթացքում կրառւան ու Բերդը չհանդիպեցին իրար: Բայց յանկարծ տան տիկինը գահաժառանգի և երկու սպաների— կրառւի և Բերդի համար թղթախաղի սեղան պատրաստեց:

Բերդը շատ անհանգիստ էր ու յուզւած: Խաղն սկսեց լարւած լուսվեամբ. թուղթ բաժանելու հերթը հասաւ կրառւին: Արքայորդին անսպասելի նկատեց կրառւի ձեռքի վրայ վէրքի սպի, որ հոռվմէական V թւանշանի ձև ունէր: Նա յուզւած հարցրեց, թէ կրառւը այդ վէրք որտեղ է ստացել:

Արքայորդին լաւ յիշում էր, որ երբ իրեն վիրաւոր ու կէս ուշագնաց տանում էին բանակը, տանող սպայի ձեռքի վրայ նկատել էր նոյնպիսի մի վէրք. այն ինչ Բերդի ձեռքը չունէր այդպիսի վէրք:

Կրառւը լուռ էր...

Արքայորդի Մանգէյմի բարձրաձայն բացականչութիւնը հաւաքեց հիւրերին սեղանի շուրջը:

Մանգէյմի հայեացը դարձած էր Բերդի վրայ: Սպասում էին ամենքը պատասխանի:

Օրհասական ըռպէ էր: Կրառւան էլ լուռ էր և շեշտակի նայում էր ընկերոջը:

Այդ սարսուռ ըռպէին կրառւը յիշեց Բերդի պառաւ մօրը, նրա ալեոր գլուխը պայծառ լուսով պատկերացաւ նրա առաջ:

— «Այս վէրքը ես ստացել եմ հանքային ջրի շնորհանը հանելիս», ասաց Կրառւուսը. բայց շատ ծանր էր նրա համար իրեն ուղղած արքայորդու շեշտակի հայեացքը:

Կրառւուսը խնայեց սիրող մօռ ալեռու գլուխն ու մեծ հասակը:

Ա Ն Կ Ո Զ Հ Ի Ի Բ Բ

Գիւղական սւսուցչուհու արկածը Հիւսիսային Ամերիկայում

(Ա. Մակ-Թօնայլից)

Անվեհերութիւնը իմ բնաւորութեան աչքի ընկնող գծերից մէկն էր: Գիւղական ուսուցչուհու պաշտօն ստացայ հիւսիսային Ամերիկայի գաւառներից մէկում և գալով պաշտօնատեղս՝ ես բնակւեցի գպրոցի շէնքում: Դպրոցը քաղաքից բաւականին հեռու էր, անմարդաբնակ վայրում:

Անցաւ չորս ամիս. ամեն ինչ խաղաղ էր. ինձ ծիծաղելի էին թւում այն մարդկանց նախազգուշացումները, որ ծանօթ էին այդ տեղին. և որը վտանգաւոր էին համարում:

Մի շաբաթ օր, գնացի քաղաք չորս ամսւայ ուոճիկս ստանալու: Երբ գուրս էի գալիս բանկից, հանդիպեցի ծանօթներիցս մէկին, որը շնորհաւորեց շատ փող ստանալս:

Բանից դուրս եկաւ, որ մեր դպրոցի քարտուղարը պատմել էր հիւսանոցում իմ անգա-

Խութեան մասին և հանաքով յայտնել, թէ հիմա
արժէ ինձ թալանել, որովհետեւ մեծ գումար էի
ստանալու:

Քարտուղարի վայր ի վերոյ խօսակցութիւնը
ինձ զայրացրեց և թեթև յուզւած՝ ես դարձայ
իմ առանձնացած բնակարանը:

Վրայ հասաւ մութ ամպած գիշերը: Դրսից
երկու ոտքերի տրոփիւն լսեցի, որ գալիս էր
ճանապարհի կողմից: Իսկոյն մարեցի ճրագը և
սկսեցի ականջ դնել:

Մի քանի բոպէ անց պարտէզի փոքրիկ
դռնակի մօտ կանգ առաւ մի սայլակ. սենեակիս
լուսամուտին մօտեցաւ եկողներից մէկը: Շունչս
պահեցի և կպայ պատին լուսամուտի մօտ: Այն
մարդը երեսը կպցրեց ապակուն և նայեց սենա-
կիս ներսը, որտեղ ոչոքի չտեսաւ, ու դարձաւ
սայլակի մօտ:

Շուտով սկսեց ճոճուալ հեռացող սայլակը:

Հասկացայ, որ գողերը կարծեցին, թէ ես
դեռ չէի դարձել քաղաքից. գիտէի, որ նրանք
կրկին կըգան դէպի ինձ: Գործարանը, ուր ես
կարող էի ազատել, երկու մզոն հեռու էր իմ
տանից և գտնուում էր այն կողմը, ուր սրիկա-
ների սայլակը գնաց:

Երբ նայեցի աւազակին, յիշեցի, որ ննջա-
բանիս առաստաղն ունի օդափոխութեան անցք,
առանց ժամանակ կորցնելու՝ ոտքիս տակ դրի
սեղանը, սեղանի վրայ էլ աթոռը և մեծ դժւա-
րութեամբ, հետու առնելով փողիս տոպրակը, բարձ-

բացայ այդ անցքով և նրա դուռը ամուր փակեցի, նախօրօք մի ձողով աթոռը սեղանի վրայից ցած ձգելով։ Այդտեղ ձեռքս ընկաւ մի պարան, որ վերջանում էր օղակով։ հաւանօրէն մէկը մոռացել էր։

Նորից լսւեց անիւների ճռողոցը. շունչս ինչ քաշելով ես լսեցի, թէ ինչպէս երկու հոգի մօտեցած դուանը, բաց արին և մտնելով սենակս, սկսեցին փնտուաել։

Ոչինչ չգտան, ի հարկէ. սկսեցին բարձրաձայն հայհոյել։ Մէկը նրանցից հաւատացնում էր, թէ ես որպէս թէ դեռ տուն չեմ եկել, և շտապեցնում էր ընկերոջը շուտով հեռանալ, քանի լոյսը չէ բացւել։ Միւսը պնդում էր սպասել։ Վերջապէս նրանք սկսեցին իրար հայհոյել, և մէկը հայհոյելով միւսին դուրս գնաց։

Միրտս սառել էր վախից։ Վարժ գողի աչքերը նկատեցին վերջապէս օդափոխութեան անցքի դռնակը, որը նրա ձեռքով արագ բացւեց։ Ինձ թւաց, որ մահը սարսափելի տանջանքներով մօտենում է ինձ։ Սարսափն ինձ տիրեց։

Այդ վայրկանին մի միտք փայլատակեց իմ գլխում և ազատեց ինձ։ Ես վերցրի պարանը և օղակը ձգեցի գողի վիզը։ նրան կըխեղդէի եթէ նա ձեռքը չանցկացներ օղակի մէջ։ Բայց ես պարանը քաշում էի որքան ուժ ունէի, գողը, որ կանգնած էր աթոռի վրայ, զբաղուած էր պարանով։ մինչ այդ աթոռը դուրս թռաւ նրա

ոտքերի տակից, և նա ուժգին աղմուկով փուեց
յատակին ու մնաց անշարժ:

Խելագարի պէս վերցրի ես փողիս տոպըակը
և թռայ ցած, թռիչքս անյաջող դուրս եկաւ.
Ես ընկայ ուղղակի գողի վրայ: Սարսափով տա-
նից դուրս վազեցի և երբ առաւօտեան հարեան
գործարանը հասայ, բոլոր մազերս սպիտակել
էին:

Ահա թէ ինչ կրեցի ես մի դիշերւայ ըն-
թացքում: Իմ հնարագէտ, ճարպիկ միտքը միայն
ինձ ազատեց:

Այդ ապրումներից յետոյ, այնքան աշխա-
տանքով ձեռք բերած փողերով՝ ես զէնք գնեցի:

Այժմ, երբ լուսաւորութիւնը տարածւած է
ամեն տեղ (Ամերիկայում ի հարկէ), երբ առանց
սեռի խտրութեան ընտրողական իրաւունքը վա-
յելում են ամենքը, այդպիսի յանցագործութիւն-
ներ հազւագիւտ են:

Այնուամենայնիւ դրանից յետոյ էլ, ես շա-
րունակեցի նոյն տեղում մնալ և կատարել եմ
մեծ գործ: Գիւղացիք էլ աւելի էին յարգում
իրենց փոքրիկ վարժուհուն:

Իմ աշակերտ, աշակերտուհիներս առաջար-
կում էին ինձ միշտ պահապան լինելու, բայց
ես մերժում էի:

ԲԵՆԴԵՐԲԻԻ ԱՐԿԱՐԸ (ՎԱՅՐԻ ԱՅԾ)

(ՅԵՐԱԿԱ ՍԵՒԱԼԻԳ)

Սիրուն Մարգարիտը կրունկները անհամբեր խփում էր գետնին: Նա դիտում էր այն ջահել զոյգին, որ մօտենում էր նրանց: Եկողները նրա տալ Աննան էր, մի գեռատի աղջիկ, և ամաչկոտ սպայ Բենդերբին: Երեսում էր, որ Բենդերբին շփոթւած էր:

Մարգարիտը մըթմըթում էր իր նշանածիր, մայօր Բեգշառի վրայ, որ կանգնած էր նրա կողքին, անւանում էր նրան անհոգ, շուտ գլխի չընկնող, որովհետեւ Բեգշառւն, որ աւելի մեծ էր, հարկ էր որ փոքր սպային, այդ վախկոտ Բենդերբիին, համարձակութիւն ներշնչէր: Աննան սիրում էր Բենդերբիին, իսկ Բենդերբին, որ սիրահարւած էր Աննայի վրայ, չէր համարձակւում իր զգացմունքը յայտնել աղջկան: Հարկաւոր էր, որ մի փորձառու մարդ խառնէր նրանց սիրային պատմութեանը:

Մայօր Բեգշառւն ամեն օր լսում էր նոյն յանդիմանութիւնները, և նրա գլուխն զբաղւած էր այն հարցով, թէ ինչպէս անէ, որ Բենդերբին թողնի իր ամօթխածութիւնը:

Մի անգամ Մարգարիտի հայրը պատրաստում էր որսի գնալ. Նա վարձեց մասնագէտ որս փնտողներ: Բոլորը խօսում էին որսի մասին: Բենդերբին հրաւիրւածների թւումն էր:

Ճաշի ժամանակ խօսք բացւեց որսւած կենդանիների մորթիներից հաւաքածու կազմելու վրայ: Աննան յայտնեց, թէ շատ է փափագում մի արկարի գլուխ ձեռք բերել, բայց դժբախտաբար շատ դժւար է որսալ այդ կենդանուն:

Մարգարիտի համար անսպասելի, որը շարունակ հետեւում էր երիտասարդ զոյգին, Բենդերբին դարձաւ Աննային այս հարցով, թէ կընդունէ՞ արգեօք Աննան նրանից այդ կենդանու գլուխը եթէ ինքն սպանի: Աննան պատահանեց, թէ այդ գլխի համար պատրաստ է տալ այն ամենը, ինչ որ ունի:

Հետեւեալ օրը որսորդները բարձրացան գեղեցիկ անտառուտ սարերը: Մարգարիտն ու Աննան զրօսախնջոյք սարքեցին դաշտում, որտեղից կարող էին դիտել հեռագիտակով այն ամենը, ինչ կատարւում է սարերի սանրանման բարձունքների վրայ:

Օրը բախտաւոր էր: Որսորդների առաջ անսպասելի կերպով դուրս եկաւ վայրի այծերի մի հօտ. հօտի առաջից գնում էր խոշոր, մոխրագոյն ու թաւամազ, մեծ ու ոլորուն պողերով սէիզը (առաջնորդը):

Բեղշառն տեսաւ, որ Բենդերբին կանգնած է թեք ապառաժի գլխին և ձգւում է դէպի սէիզը: Նա հաւատացած էր, որ երիտասարդ սպան անսխալ հրացանաձիգ չլինելով, կարող էր իզուր կրակ բանալ և խրտնցնել հօտը. չի թողնի, որ միւս որսորդները, ինչպէս հարկն է, օդուեն այդ

յաջող դէպքից. որպէսզի Բենդերբին զգուշացնէ,
նա մի փոքրիկ քար նետեց դէպի նա:

Քարը դիպաւ Բենդերբի մէջքին: Սա վեր
թռաւ, յետ քաշւեց, աշխատելով ոտքի կանգնել.
հրացանը ձեռքից վայր ընկաւ և սուզւեց ան-
դունդը:

Վախեցած հօտը փախուստի դիմեց ապա-
ռաժի նեղ եզրով, որը 20 ոտնաչափ բարձրու-
թիւն ունէր. քիչ ներքե, թեք գծով ցած էր իջ-
նում ձորակը, ծածկւած կարճ խոտով:

Յանկարծ Բեդշառն սարսափով նկատեց,
որ Բենդերբին ձեռքերը առաջ մեկնեց և քսան
ոտնաչափ բարձրութիւնից ցած նետւեց ու նրա-
տեց սէիզի մէջքին:

Բենդերբին խիզախաբար բւնեց սէիզի կո-
կորկորդը, որը յուսահատ խոպոտ մկըկում էր:
Սկսւեց կատաղի պայքար: Մի վայրկեան չան-
ցած՝ որսորդն ու կենդանին սարի լանջից մեծ
արագութեամբ գլորւեցին ու կորան ծառե-
րի մէջ, և իջնում էին դաշտը:

Բեդշառն սարսափած ու յուսահատ սկսեց
կածանով ցած վազել:

Մինչ այդ Մարգարիան ու Աննան տեղա-
ւորւել էին անտառի ծայրին և ուրախ զրոյց
էին անում ու դիտում անմատչելի ժայռերի
լանջերը:

Յանկարծ նրանը տեսան մի զանգւած, որ
զլորւում էր բարձրունքից: Լսւեց մի ուժեղ թրմ-
փոց և զանգւածը բաժանւեց երկու մասի:

Նրանց ոտքերի մօտ ընկաւ անկեդան սէ-
իզը, ջարդելով իր ողնաշարն ու դիմացի ծառը:
Բենդերբին, որ բռնել էր այծի երկար մազերից,
հարւածի ուժից մի կողմ նետւեց և ընկաւ ան-
շնչացած, կանանցից քիչ հեռու:

Մի ճիչ հանեց Աննան ու մօտ վազեց Բեն-
դերբին, բարձրացրեց նրա թուլացած մար-
մինը և գլուխը դրեց իր ծնկներին:

Քիչ անց ուշքի եկաւ Բենդերբին, ճանաչեց
Աննային. քաղցր ժպիտը լուսաւորեց Բենդերբին
առանջւած դէմքը:

Նա կամաց, բայց վստահ յայտնեց Աննային,
որ վաղուց սիրում է նրան և խնդրում է նրա
ձեռքը: Աղջկը պատասխանեց մի ժպտով, որ
լի էր բախտաւորութեամբ: Կամաց-կամաց ոյժ
ստացաւ Բենդերբին, ոտքի ելաւ և իր գիրկն ա-
ռաւ գեղեցիկ Աննային:

Սէրը ուժեղ է իմահւան երկիւղից և ա-
ռանցըն է մարդկային կեանքի:

ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՏԱՍԱՆԸ

(Հնդկական կետներից)

Հնդկաստանը բնութեամբ հարուստ երկիր
է. նրա ճոխ ու փարթամբ բուսական, կենդանա-
կան ու հանքային թագաւորութիւնները, տաք
կլիման, այրող արեն ու հզօր բամին ստեղծում

են այնտեղ մի կեանք, որը որքան պերճ է ու գունագեղ, որքան խոշոր ու վիթխարի, նոյնքան արագ է ու վաղանց, նոյնքան փութելու ու սըրարշաւ։ Այդ երկրի մեծամեծ բարիքների հետ միասին ծնւռում, աշխարհ են գալիս նոյնքան խոշոր չարիքներ։ Որքան ծնւռող կեանքն է զւարթ, հիւթալից ու կորովալի, նոյնքան մահը արագաթափ, սպանիչ։

Հնդկաստանի խոշոր չարիքներից մէկն էլ համարւում է խոլերա կոչւած հիւանդութիւնը, որ կարճ միջոցում անթիւ զոհեր է տանում։ Սակայն երկիրը չի դատարկւում, շնորհիւ նրա առուն ուժերի։

Մինչև այժմ մարդկային գիտութիւնն ու հնարագիտութիւնը դեռ այն աստիճանի չի թափանցել տարածւել այդ երկրում, որ հնար լինէր նման ահռելի չարիքների առաջն առնել՝ ինչպէս օրինակ այդ տարափոխիկ հիւանդութիւնը արդէն հազւագիւտ երևոյթ է դարձել Եւրոպայում։

Խոլերան հնդկաստանում դեռ բարձրագլուխ իր արշաւն է կատարում, մտնում ամեն տեղ, բաց անում ամեն մի դուռ, նա չի խնայում ոչ մեծին, ոչ փոքրին, ոչ հարուստին, ոչ աղքատին, ոչ տիրոջը և ոչ ծառային։

Օրերից մէկում նա մտաւ և Խարվադար գաւառը, ուր շատ անգամ էր, ի հարկէ, եղել Տեղը ծանօթ, մարդիկ լուռ ու հնազանդ նրան, նոյն խոկ վախենում էին նրա անունը տալ, այն-

քան սարսափի էր տարածել նա այդ ժողովրդի վը-
րայ : Տեսւն սարսափը սակայն բթացնում է զգաց-
մունքը, և հնդիկներն իրօք բութ զգացմունքով
տանում են նրա հարևածները:

Այս անգամ խոլերայի հունձը շատ յաջող
էր: Խարվանդարի ազգաթնակութեան համարեա
կէսը զոհ գնաց նրան:

Խոլերան չքաշւեց մտնել և հարուստ ու
անւանի Խամուդ-Ալի Բօլգակ-Մուստամ-խանի
տունը, որ հեռու ազգական էր այդ գաւառի տի-
րոջ, Ռաջիին, ինչպէս կոչում էին նրան տեղացիք:
Խամուդ-Ալի խանը այդ ժամանակ տնից
բացակայ էր: Նա գնացել էր կալկաթա Ռա-
ջիի որոշ յանձնարարութեամբ: Տանն էին մնա-
ցել ընտանիքն ու ծառաները: Խոլերան այդ
տանից էլ վերցըեց մի քանի հոգի:

Խամուդ-Ալի խանի կինը, տիկին Սարախը
որոշեց ուխտ գնալ «Լուսաղբիւրը», որ այդաեղից
մօտ յիսուն վերստ հեռաւսրութեան վրայ էր
գտնւում:

Պատմում էին, թէ «Լուսաղբիւրը» նոր էր
դուրս եկել և բղխում էր այն սուրբ Բրահմայի
գերեզմանից, որը յիսուն հազար տարի սրանից
առաջ ապրում էր այդ երկրում: Ով մի կում
ջուր խմէր այդ աղբիւրից, նա ազատ կը մնար
խոլերայի հարւածից: Ժողովուրդն ահազին բազ-
մութեամբ դիմում էր այդտեղ, որ վափագելի
ուխտատեղի էր դարձել:

Տիկին Սարախը հրամայեց սալլ լծել առաւ-

Փը հետ իր փոքրիկ ծծկեր երեխային, Խամուդ-
Աղի խանի որդի Մագօմին, սիրելի աղախին Մի-
քամին ու այլ ծառաներ և ճանապարհ ընկաւ
գէպի «Լուսաղբիւր»։ Միրիամն էլ իր հետ էր
վերցրել իր ծծկեր երեխային, Եանսիին։

Ճանապարհին՝ գեռ չհասած «Լուսաղբիւ-
րին»՝ մեռան նախ սայլապանը, միւս ծա-
ռաները, և ապա ինքը տիկին Սարախն ու
աղախին Միրիամը։ Կենդանի մնացին միայն
երկու փոքրիկ երեխան՝ Մագօմն ու Եանսին և
մի դոյգ եզները, որ քաշում էին սայլը։

Եզները՝ կորցնելով իրենց տէրերին և մնա-
լով իրենց կամքին, բնականաբար յետ են դառ-
նում գէպի տուն։

Անտէր սայլը, որի վրայ նստած են մնում
երկու անխօս ծծկեր երեխաները, ճանապարհին
պատահում է գողերի, որոնք տանում են նրա
վրայի բոլոր իրեղէնները, նոյնիսկ մեռածների
շորերը։ Հեն քաշում մերկացնել նաև երեխա-
ներին և վերցնել նրանց շորերը։

Ամեն մի անցորդ՝ տեսնելով սայլը և նրա
վրայի սեացած գիտակները՝ հեռու էր փախչում,
քարեր ու փայտեր նետում եզներին, որ շու-
տով զնան հեռանան։ Վերջապէս սայլը կանգ է
տռնում Խամուդ-Ալի խանի տան առաջ։ Դուրս
են զալիս ծառաները և սարսափած՝ դիտիներն
են սայլից վեր բերում։

Գալիս է տուն և ինքը Խամուդ-Ալի լ անը։

Նա մազերն է փետում, գլխին մոխիր ցանում
այդ մեծ դժբախտութեան համար, որ հասել էր
նրա ընտանիքին, որից միայն մի երեխայ էր
կենդանի մնացել:

Մի ցաւ էլ այն էր, որ երկու երեխան, ո-
րոնք մերկ, անդիտակցաբար ճանապարհորդել
էին վարակւած դիակների հետ և այնուամենայ-
նիւ առողջ մնացել, շատ նման էին միմեանց.
Կարծես մի խնձոր էին երկու կէս արած: Նրանց
միմեանցից տարբերելու հնար չկար: Նրանց մայ-
րերը կարող էին միայն այդ իմանալ, որոնք ար-
դէն մեռել էին: Իրենք երեխաները չէին կարո-
ղանում խօսել, որ կարելի լինէր ճանաչել:

Ծառաներից ոմանք մէկին էին համարում
խանի որդի, միւսին—աղախնի, ոմանք՝ ընդհա-
կառակը. սակայն ոչ ոք ոչինչ դրական բան
չէր կարող ասել:

Խամուդ-Ալի խանը իրօք դժւար կացութեան
մէջ էր, անհրաժեշտ էր, որ նա ճանաչէր իր
իսկական ժառանգին և նրան յանձնէր իր ամ-
բողջ կարողութիւնը, իր տոհմական իրաւունք-
ներն ու պատիւները:

Նա անձարացած դիմեց այդ խնդրի վճռման
համար Ռաջիին: Բայց ինչ կարող էր սնել Ռա-
ջին: Խամուդ-Ալի խանը դիմում է երկրի իմաս-
տուն ու խելացի մարդկանց այդ խնդրի առթիւ,
և ոչ ոք չի կարողանում այդ հանելուկը լուծել:
Վերջուակէս տաճարի բրահմաները յայտնե-

ցին, որ այդ դժւարին խնդիրը կարող է լուծել Խարվադարի իմաստուն փիղը: Որոշւեց այդ գործը յանձնել իմաստուն փղի դատաստանին:

Խարվադարի Ռաջիի պալատի առաջ տարածուում էր «մարմարիօն հրապարակը», որն այդ օրը զարդարւած էր գրօշակներով, նրա միջին տարածութեան վրայ փուած էր մի մեծ խորասանի թանգարժէք խալի: Խալու վրայ խաղում էին երկու փոքրիկ երեխայ՝ Մագօմն ու Եանսին: Բազմաթիւ ամբոխը շրջապատել էր հրապարակը:

Զանցան մի քանի բոպէ պալատից գուրս եկաւ մի մեծ թափոր, բաղկացած բրահմաներից և նրա զանազան կարգի ծառայողներից կրօնաւորներից:

Ոստիկանութիւնը ամբոխը յետ մղելով՝ ճանապարհ բացեց թափորին, որը կանգ առաւ հրապարակի միջին մասում: Թափորին, հետեւց հոյակապ, մարմնեղ ու հզօր պատերազմական ծեր փիղը, որ զարդարւած էր ասեղնազործ ու գեղեցիկ ծածկոցով:

Փիղը անցնելով Ռաջիի մօտից, որ բազմել էր հրապարակի մէջ տեղում, գլուխ տւեց աւանդական քաղաքավարմամբ նրան, մըթմըթալով ինչ որ բան, երեի, փղական լեզով ողջունեց նրան: Ապա փղավարը, որ նստել էր փղի վրայ, ուղղեց նրան գէպի երեխաները: Փիղը մօտեցաւ խալուն և նայում էր նրանց մարդկային աչքերի արտայայտութեամբ:

Երեխաները սկզբում անտարբեր էին դէպի
փիղը, երևի չէին նկատել նրան. սակայն շուտապ
նրանց հայեացքն ուղղւեց դէպի այդ հսկայ կեն-
դանին:

Երեխաներից մէկը՝ տեսնելով փղին՝ սուբ-
հայեացք ձգեց նրա վրայ, ապա կարծես վախե-
ցաւ, երեսը շրջեց նրանից ու արագ չորեք-
թաթ տւաւ. այնպէս որ գլորւեց և ընկաւ խա-
լու վրայից: Բրահման վերցրեց նրան և կրկին
դրեց խալու վրայ: Բայց երեխան կրկին հեռա-
ցաւ փղից:

Միւս երեխան ընդհակառակը ուշի ուշով
դիտեց փղին. ապա ձեռքերն իրար տւեց կար-
ծես, ծափ էր տալիս, մի ինչ որ բան թոթովեց
ու չորեքթաթ տալով՝ գնաց դէպի փիղը:

Փիղը երկարացրեց կնճիթը, բարձրացրեց
նրան վեր և դրեց իր մէջքին:

Բրահման բարձրացաւ տեղից, մօտեցաւ Խա-
մուդ-Ալի խանին և ասաց. «Սա է քո որդին,
խան. ցոյց տալով փղի վրայի երեխային: Նա
չվախեց փղից, որովհետեւ նրա երակներում
հոսում է նրա նախնեաց արիւնը, որոնք սովոր
են կռիւ գնալ անվախ ու ապատ կամքով. Փղե-
րսվ յարձակւել թշնամու վրայ անվեհեր հոգով»:

«Միւսը, աղախնի որդին է. նրա մէջ խօսեց
նրա նախնիքների դարաւոր ստրկութիւնն ու
վախը: Դատը վերջացաւ»:

Խամուդ-Ալի խանի բարեկամները շրջապա-

տեցին նրան և շնորհաւորեցին խնդրի յաջող
լուծման համար:

ԱՆՀԱՒՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱՄՏՈՒԹԻՒՆԸ

(Եւ Առամօնակից)

Տրիպոլի բազիսներից մէկում ընկած է Տարարուլօս-Գարք կոչւած նահանգական քաղաքը: Քաղաքի մի ծայրում բարձրանում էր նահանգապետի շքեղ պալատը, ուր ապրում էր այդ երկրի յայտնի արաբական շէյխը, Օմար-բէն-Հուսէյնը: Թուրքական կառավարութիւնը՝ ակնածելով և խոնարհելով արաբ շէյխի մեծ հեղինակութեան առաջ ի պատիւ և ի վարձատրութիւն նրա երկարամեայ գոծունէութեան՝ նահանգապետի պալատումն էր բնակութեան տեղ յատկացրել նրան:

Օմար-բէն-Հուսէյն շէյխը սկսած երիտասարդ հասակից ոտքի տակ էր տւել ու անցել Աֆրիկայի բոլոր արաբական երկիրները: Սկսած Սահարա և նման տօթ անապատներից մինչեւ անտառուտ ու ապառաժուտ անմատչելի լեռները: Նա ման էր եկել ոտքով կամ ուղտի վրայ նստած, ամեն տեղ փառաբանել Ալլահի անունը, ամենուրեք տարածել Ղուրանի սուրբ խօսքը:

Զկար Աֆրիկայում արաբական մի ցեղ, որ չճանաչէր Օմար-բէն-Հուսէյն շէյխին, կամ նրա անունը լսած չինէր: Սկսած նստակեաց, քա-

դաքակըթութեան շէմքին ոտք դրած ցեղերից
մինչև կիսավայրենի ու աւազակ արաբները՝ ա-
մենքը յարգում ու պաշտում էին նրան:

Ծերունի շէյխի խաղաղ քարոզական կեանքը
անցել էր համարեա անամպ: Այդ կեանքը
միայն մի գժբախտութիւն էր ունեցել: Շէյխի
կինը՝ Լէյլին ծաղիկ հասակում մեռել էր, թող-
նելով Օմար-բէն Հուսէյնին, որպէս մխիթարու-
թիւն մի որդի, Դաւութ անունով:

Շէյխը ճշմարիտ անչափ սիրում էր Դաւու-
թին, որը նրա զառամեալ հասակի միակ սփո-
փանքն էր: Թուրք կառավարութիւնը, ի նշան
առանձին յարգանքի դէպի ալեոր շէյխը, Դաւու-
թին ընդունել էր զինւորական ծառայութեան,
սպայի աստիճան տւել, իւզբաշի կարգել: Դա-
ւութը հրամանատար էր հեծեալ գնդի:

Հայր ու որդի ապրում էին շատ սիրով,
հաշտ ու համերաշխ: Ամեն անգամ, երբ որդին
վերադառնում էր զինւորական մարզանքից, հայրը
դիմաւորում էր նրան քաղաքից դուրս: Զերմ
համբոյրներով գրկում էին միմեանց հայր ու
որդի և հեծելազնդի համողջոյնի ձայնի տակ
դառնում տուն:

Սակայն Ալլահի կամքին հաճելի շէր, որ
Օմար-բէն-Հուսէյն շէյխը սովորական մահով
գերեզման իջնէր: Կարծես կայծակի հարւած էր,
որ իջաւ անամպ երկնքից, լուսածագին անհա-
ւատների թնդանօթների գզրդիւնը սարսափ բե-
րեց Տալաբուլօս—Գալրի պատերին: Ագահ իտա-

լացիք իրենց թաթերն էին երկարացնում արաբական հարուստ հողը յափշտակելու:

Թուրք զօրքը, որ անկազմակերպ էր ու հին դէնքերով զինւած, անկարող էր դիմադրել ամեն բանով պատրաստ ու լաւ զինւած թշնամուն: Նա թողեց արաբական ծովափնեայ վայրերը, նոյնպէս և Տարաբուլօս-Գարբը ու հեռացաւ երկրի խորքը նոր ուժերով յարձակւելու թշնամու վրայ:

Դա կրկնակի հարւած էր Օմար-բէն-Հուսէյն շէյխի համար. մէկ՝ որ իսլամական կրօնն էր պարտում, երկրորդ՝ նրա միակ որդին էր հեռացել նրանից: Ալլահը զիտէր, թէ պատերազմի դաշտում ինչ կարող էր պատահել նրան: Օրերից մէկում, երբ Օմար-բէն-Հուսէյն շէյխը ծնկաչոք իր ջերմ ազօթքներն էր վերառաքում Ամենակարող Ալլահին և խնդրում նրանից իսլամական աշխարհին յաղթութիւն, ներս մտաւ նրա ծառայ Մահամմէդը և յանձնեց շէյխին Դաւութի նամակը.

Շէյխն ինքն էր ուղարկել Մահամմէդին Դաւութի մօտ նրանից լուր բերելու և եթէ հնարաւոր է նրա հետ տեսակցելու:

Դաւութը գրում էր, որ ինքը սղջ առողջ է: Պատրաստում են թշնամու վրայ յարձակւելու և Տարաբուլօս-Գարբը յետ խելու: Հրատարակւած է կրօնական պատերազմ, ամբողջ արաբական աշխարհը ոտքի է կանգնել, միացել են բոլոր ցեղերը: Իսկ հօր հետ տեսակցելու տեղը

Նշանակել է Բու-Մելիան ջրհորի մօտ նոյն օրը
կէս գիշերին, Այդտեղ իտալական պահապաննե-
րի շղթան նօսր էր: Դաւութը յոյս ունէր, ծա-
ծուկ անցնել այդ շղթան:

Վրայ հասաւ գիշերը. հանդարտ ու խաղաղ
հարաւային թովիչ գիշեր էր: Երկնքում աստղե-
րըն էին փայլվում, երկրի վրայ իտալական
զօրքի վրանների առաջ խարոյկներն էին ծուխ
ու բոց արձակում:

Բու-Մելիան հորի մօտով ահա անցնում են
երեք պահապան զինւոր, ծխում են նրանք ու
հանդարտ քայլում, հեռացան մթութեան մէջ:

Թփերի տակ թաքնւած, ջրհորի հէնց կողքին
սպասում է ծերունի շէյխը իր սիրելի որդուն:

Մօտ է կէս գիշերը: Բացարձակ լուռթիւն
է տիրում: Ահա մի պատկեր է նկատում մթու-
թեան մէջ իտալական գլխարկով ու սպայական
վերարկուով:

— Թող օրհնւի Ալահը. հայր այստեղ ես:

Ասաց եկողը և վրայից դէն ձգեց իտալա-
կան վերարկուն: Շէյխի առաջ կանգնած էր
Դաւութը:

Նա թողել էր իր ձին օազիսի սահմանի
վրայ, ոտքով անցել թշնամու շղթան, ուր պա-
տահել էր իտալացի պահապան սպային, խեղդել
էր նրան, հագել վերարկուն, դրել գլխարկը և
այդ կերպ ծպտեալ անցել սահմանը:

Դաւութը պատմեց իրենց պատրաստութիւն-
ներն ու նպատակները, և յոյս յայտնեց, որ

կարձ ժամանակում արաբների միացեալ դուռ
ոյժը յետ կըքշէ թշնամուն և ծովը կըլցնէ:

Ծէղին մօտ էր, երբ հայր ու որդի բաժան-
ւեցին. դեռ մի քանի քայլ չէին անցել, երբ ի-
տալական պահապանը նկատեց անցնող սուերը և
ձայն տւեց.

— Ո՞վ է գնում:

Միևնոյն ժամանակ պատասխան չստա-
նալով ելեքտրական լապտերը ուղղեց սուերի
կողմը և մի քանի անգամ զարկ տւեց:

Շէյխը վազեց գէպի պահապանը և կանգ-
նեց լապտերի դիմաց: — Փախիր, ազատւիր,
Դաւութ, — ձայն տւեց շէյխը և այդ կերպ Դա-
ւութին ծածկեց թշնամու աշքից:

Իրարանցում բարձրացաւ պահապանների
մէջ, զարկեր տւին մի քանի անգամ գէպի թըշ-
նամու կողմը և կըկին ամեն ինչ հանդարտւեց:

Շէյխին բռնեցին ու տարան բանտ:

Կէս օրին բանտ մտան երեք զինւորական,
սպայի շորերով: Նրանցից մէկը, որ ամենից
մեծ էր երեսում, ձեռքում բռնած թղթի վրայ
իտալերէն մի բան կարդաց, որից շէյխը ոչինչ
չհասկացաւ:

Ապա թարգմանը, որ արաբերէն լաւ չէր
իմանում, տեղատեղ թուրքական բառեր մէջ
ձգելով, ասաց հետեւեալը:

— Ծերունի, քեզ մեղադրում են, որ տե-
սակցութիւն ես ունեցել լրտեսի հետ, որը

սպանել է իտալական սպային: Քո տանը գտել
են զինուորական գրքեր, քարտէզներ, պատկեր-
ներ, սպայական շորեր, թամբ և զէնք: Դու
գիտես որ Տրիազօլին այժմ պատկանում է իտա-
լիային: Գուք բոլորդ այժմ ոչ թէ թուրքական,
այլ իտալական հպատակ էք: այդ յայտնի է
տեղիս ազգաբնակութեան: չէ որ ամեն տեղ
կպցրած են գեներալ նահանգապետի յայտարա-
րութիւնները: Դու գիտակցաբար դիմադրում ես
օրինաւոր իշխանութեանը:

Օմար-բէն Հուսէյնը գլուխը բարձրացնելով
այսպէս խօսեց.

— Պարոն, քո խօսքերը անմիտ են: Մեզ,
իսլամի հաւատարիմ զաւակներիս համար ի՞նչ
նշանակութիւն ունի, որ ձեր զօրքերը ժամա-
նակաւորապէս մտել են մեր տները: Միթէ թղթի
կտորները կարող են մեզ ազատել հաւատարմու-
թեան այն երդումից, որ տւել ենք Ղուրանի վրայ
բոլոր մուսուլմանների հրամայողին, սուլթանին,
որ Ալլահի ստւերն է երկրիս վրայ, ուղղափառ-
ների խալիֆը: Հազարաւոր այդպիսի թղթեր
չեն ազատի մի մուսուլմանի հոգի, որովհետեւ
աշխարհական իշխանութեան կարգադրութիւնը,
որ չէ սրբագործւած հոգևոր իշխանութիւնից,
ոչ մի ոյժ չունի: Դու ասում ես, որ իմ տանը
գտել են օսմանական սպայի իրեր: Այդ իրերը
իմ որդունն են, Դաւութ-բէն Օմարինը. նա ըս-
պայ է, իւզբաշի. գիշերը տեսակցել եմ նրա
հետ և այդ բանի համար ես ինձ մեղաւոր չեմ

համարում. չկայ օրէնք, որ արգելէ հօրը տեսնելու
որդուն. թէ նա սպայ է սպանել, ինձ յայտնի
չէ: Պատերազմում մարգիկ սպանում են մի-
մեանց: Զէ որ մենք չենք սկսել պատերազմը,
այլ դուք էք մտել մեր քաղաքներն ու գիւղերը:

Լոեց շէյխ Օմար-բէն Հուսէյնը:

Թարգմանը շատ համառօտ, աղաւաղւած
ձեռվ յայտնեց միւսներին շէյխի խօսքերը:

Մայօրը հրամայեց ասել շէյխին, թէ նրան
սպառնում է մահւան պատիժ, որովհեակ մաս-
նակցել է իտալիական սպայի սպանման գործին
և աջակցել է լրտեսի փախստին:

— Ես ասացի քեզ, պարոն, վրայ բերեց
շէյխը, թէ ոչինչ չգիտեմ իտալական սպայի
մասին: Որդուս հետ եմ տեսակցել. բայց նա
լրտես չէ, և եկել էր միայն ինձ տեսնելու: Ասա
ինձ, ես ինչ պիտի անէի քո կարծիքով:

Թարգմանը դժւարացաւ պատասխանել:

— Ասացէք ծերունուն, դժգոհ առարկեց մա-
յօրը, թէ նա պարտաւոր էր իշխանութեանը
յանձնել թուրք սպային, թէկուզ և նրա հա-
րազար զաւակը լինէր նա: Օրէնքը մէկ է ամեն-
քի համար:

Թարգմանից լսելով այդ խօսքերը՝ Օմար-
բէն-Հուսէյնը դառն ժալտաց, դարձաւ դէպի
պատը և արտասանեց.

— Մի՛ վիճիր անմիտի հետ և մի համոզիլ
յիմարին, ինչպէս ասւած է Ղուրանում:

Նրանք թողին և հեռացան: Բանտի դուռը

շահեւնով փակւեց։ Մեռելային լոռոթիւնը կրբ-
կին պաշարեց բանտը։

Անցաւ մի քանի ժամ։ Յանկարծ բանտի
պատերին հասաւ թնդանօթի ձայներ։ Կապոյտ
երկնքի փոքրիկ կտորը, որ երկում էր բանտի
ցանցաւոր պատուհանից, ծածկւեց թուրքական
գնդացը ծխով։

Դաւութը ճիշտ էր ասում, մրմնջաց ծե-
րունի շէյխը։ մերոնք յարձակում են գործում։
Տուր յաղթութիւն մերոնց ամենակարող Տէր։—
Աղօթում էր նեխւած բանտի պատերի մէջ կուչ
եկած Օմար-բէն-Հուսէյն շէյխը։

Երկու ամսից աւելի մնաց շէյխ Օմար-բէն-
Հուսէյնը նեղ ու նեխւած բանտում։ Իտալա-
ցիք զբաղւած էին պատերազմով և մոռացել էին
նրան։

Սին-Զարի յաղթութիւնից յետոյ իտալական
զօրքը դադար առաւ տօնելու այդ յաղթութիւ-
նը։ Իսկ արաբները մի քանի արիւնալի կոփւ-
ներից յետոյ ստիպւած էին եղել քաշւել դէպի
Զէբել-Գուրիան սարերը։

Տօնի նախընթաց օրը շէյխին դուրս բերին
բանտից և ներկայացըին պատերազմական դաշ-
տային դատարանին։

— Մի վախիր ծերունի, ասաց թարգմանը
շէյխին, այսօր մենք տօնում ենք մեր յաղթու-
թիւնը. այդ ուրախ օրւայ պատճառով հրամա-
նատարը քեզ կըներէ, եթէ ներում խնդրես։

— Անիծուի քո լեզուն, մըմնջաց քթի տակ
շէյխը, որ յայտնեց ինձ այդ բօթը... և նրա
դէմքը սկացաւ:

Դատը երկար չքաշեց. դատախազը, օրէնքի
այդ պաշտպանը կարճ կտրեց մեղադրական ճա-
ռը, որպէսզի չուշանայ հանդիսից:

Վերջին խօսքը տրւեց մեղադրւողին:

— Ասա դրանց, դառնալով թարգմանին՝ խօ-
սեց շէյխը, թէ ես չեմ հաւատում անհաւատ-
ների արդարամտութեանը, որ ինձ, անպարտիս,
տանջեցին բանտում միմիայն նրա համար, որ
ես տեսակցել եմ որդուս հետ: Ասա, որ փողոց-
ների պատերին կպցրած այն թղթի կտորները
անզօր են մուսուլմանի հոգին ստրկացնելու, առ
սա, որ կըխփէ ժամը, երբ գետերով թափւած
արինի և այն անարգանքի փոխարէն—որ,
զգում եմ, թափելու էք իմ ալեոր գլխին—վրէժ
կըլուծեն ձեզանից:

Թարգմանը կարճ կտրեց, թէ մեղադրւողն
իրեն մեղաւոր չի համարում որդուն տեսնելու
համար:

— Օրէնքի առաջ բոլորը հաւասար են, վրայ
բերեց նախագահը:

Խորհրդակցութիւնը նոյնպէս կարճ տեսց:

Նախագահը բարձրաձայն կարգաց վճիռը, որ
վերջանում էր այս խօսքերով.

Վերև յիշւած այս բոլոր յանցանքների հա-
մար պատերազմա-դաշտային դատարանը գեկ-
տեմքերի վեցին արաբական շէյխ Օմար-օրէն-

Հուսէյնի համար վճռեց մահւան պատիժ՝ կախա-
ղան բարձրացնելով:

Վճիռը գործադրել 24 ժամւայ ընթացքում»:
Թարգմանեցին շէյխին վճռի միտքը:
— Հասկացայ, — ընդհատեց թարգմանին շէյ-
խը.

— Դու կարող ես ներում խնդրել. յաղթու-
թեան պատճառով այսօր դատաստանը կարող
կրինի գուցէ քեզ ներել:

— Ցիմարի խօսքերը չեն պղծի իմաստունի
ականջները — սասաց ինքն իրեն շէյխը, ապա
բարձրաձայն աւելացրեց.

— Թող կատարւի, ինչ որ լինելու է: Կամ-
քը Ալլահինն է — նա այդ խօսքերով երեսը դար-
ձրեց դատաւորներից:

Շէյխին կրկին բանտ տարան: Ճանապար-
հին նա տեսաւ թուրքական եօթ թնդանօթ
հիւսւած արմաւենու ճիւղերով, որ խել էր
թշնամին: Արտասուքի երկու խոշոր կաթիլ գը-
լորւեցին ալեզարդ շէյխի կնճռուտ դէմքի վը-
րայով...

Կէս պիշերին հրապարակի վրայ մշակները
կանգնացնում էին կախաղանի սիւները:

Ժամը մէկին կախաղանը պատրաստ էր:
Շէյխը գլուխը բարձրացրեց դէպի երկինք, մըմնջաց
իր կարճ աղօթքը և իրեն յանձնեց մարդկային
բախտի Ամենակարող կարգադրողին: Դեռ դա-
հիճը օղը չէր ձգել շէյխի վիզը, երբ շէյխը

հանգիստ հոգին աւանդեց, նրա դիակը դահիճի
ձեռքից վայր ընկաւ գետնին:

Դահիճը շփոթւեց և արձակեց օղակը:

Մօտ եկան դատախազն ու սպաները. նը-
րանց առաջ փուլած էր դիակը անշարժ, տրդար
մահւան վեհութեամբ կնքւած:

— Պէտք է վճիռն ի կատար ածել,— ասաց
դատախազը և ձեռքով նշան տւեց դահիճին:

Երիտասարդ սպան անցաւ մթութեան մէջ
և արտասւեց:

Արտասւեց, որովհետեւ ջահէլ էր, լի ասպե-
տական անուրջներով, ձգտում էր դէպի կոիւ,
ձեռք բերելու պատերազմական փառք, բայց
չկարողացաւ սառնարիւն տոկունութեամբ տա-
նել անողոք օրէնքի դաժան վճիռը, ալեզարդ
ծերունու սպանութիւնը, մի օրէնք, որ ստեղ-
ծել է մարդը և ոչ Աստւած: Իսկ մարդիկ յա-
ճախ սխալում են...

Առաւօտեան շէյխի կախւելու տխուր լու-
րը կայծակի արագութեամբ տարածւեց քաղա-
քում:

Ամբոխը շըջապատեց սև կախաղանը, որի
վրայ ճօճւում էր դիակը:

— Նայիր, ասում էր մուսուլմանը զաւա-
կին, իտալացիք ձեռք բարձրացրին սուրբ ծե-
րունու վրայ, բայց Ալլահը սրբեց նրա դէմքից
այդ անարգանքը, տեսնաւմ ես, ինչպէս հանգիստ
է նրա դէմքը, որովհետեւ հոգին Մահմէդի դրախ-
տումն է:

— Յիշիր, ինչ ասած է սուրբ Հուրանում՝
վրէժ լուծիր քո թշնամիներից և նրանց զաւակ-
ներից մինչև եօթերորդ սերունդը, թէկուզ անց-
նի եօթն անգամ եօթանասուն եօթ տարի։

Ամբոխը հեղեղի նման բարգւում էր հրա-
պարակի վրայ։ Խոկ կախաղանի վրայ գրւած էր։
«Օրէնքի առաջ ամենքը հաւասար են»։

Կէսօրին հրամայւեց կախաղանի վրայից
վերցնել մարմինը, որովհետև երկիւղ էին կրում
ժողովրդի զայրոյթի բոնկումից, որը շէյխ
Օմար-բէն Հուսէյնին սրբերի շարքն էր դասել։

Կ Ն Ի Ք Ի Պ Ա Զ Ա Պ Ա Ն Ը

Պարսկական պատմւածք

(Կ. Մամոնտովից)

Արքայից արքան, արիեղերքի հրամայողը,
հէնց նոր վերջացրեց իր վերջին պօէման։

Ծանր էին գրւում «Իրանի ամենամեծ բա-
նաստեղծի» երկի վերջին տողերը, զրա համար
նրա դալամը (զրիչը) պատրաստող երկու վար-
պետները լաւ ծեծւել էին բամբուկէ ճիպոտնե-
րով. նրանք գժւար թէ կարողանային շուտ ոտքի
ենել և քայլել վիրաւոր կրունկներով։ Եր-
կար կըմնայ մլականոցում անզգոյշ թանաք պատ-
րաստողը, որի պատճառով բուռն ոգեսորութեան
պահին արքայից արքան ամենագեղեցիկ խօսքի
վրայ թանաքի կաթիլ թողեց, որը մթագնեց

Ալլահի փոխանորդի, Աստուծոյ ստւերի, կրակուտոգնորութիւնը...

Բայց պօէման լրացել է.

Այնպէս քաղցր, այնպէս ներդաշնակ են հընչում թագաւոր-բանաստեղծի տկանջին սքանչելի յանգաւոր տողերը:

— Փառք և գոհութիւն Ալլահին, որ պարգևատրել է ինձ այսքան առատ ձիրքով,— առանձին գոհունակութեամբ աչքերը երկինք է դարձնում շահը:

— Եյ, ծառաներ, կանչեցէք ինձ մօտ պալատական բանաստեղծներին:— Հրաման արձակելով՝ տարածւեց փափուկ թախտի վրայ, մութաքաները գիտի առակ իրանի ահաւոր աէրը, որ մի օրում միայն հարիւրաւոր մարդիկ այն աշխարհն է ուղարկում, և ազատ շնչեց երեկոյեան զով օդը:

Խոնարհ գլուխ տալով՝ ստրկական ժպիտը դէմքներին՝ արքայի մօտ սողացին պալատական բանաստեղծները:

— Նստեցէք. այսօր վերջացրի իմ նոր պօէման— «Լացող վարդենին»:

Հիացմունքի թեթև ալիք անցաւ ստրուկ ամբոխի վրայով:

— Օ՛, բանաստեղծութեան ամենախոշոր գոհնարն է, — շընջացին շողոքորթ բերանները:

Ահաւոր արքայից արքան դասնում է հասարակ մահկանացու. նա գիտէ, որ շի լսելու աննապաստ մի խօսք, որ հիացմունքի թափակ կընդունեն նրա տողերը, այնուամենայնիւ յուղ-

ւում է նրա սիրալ, և, ակամայ ատելով ցեցերի այդ զագիր ամբոխը, սպասում է նրա էժանր գնահատման:

Վերջացրեց շահը աչօէմայի ընթերցումը: Օձի գալարումներով՝ ծափերի աղմուկով և միւմեանց ընդհատելով՝ բղաւում են պալատական բանաստեղծները.

— Ալլահը վկայ, դու բարձր ես, արքա, անման Սայադից:

— Միթէ կարելի է քեզ հետ համեմատել հոչակաւոր Հաֆիզին:

— Ո՞հ, ինչ ոյժ, ինչ թռիչք, Աստւած իմ, գոնէ մի անգամ այդպէս գրած լինէր քաղցրախօս Ֆիրդուսին:

— Գնացէք, ասաց շահը նրանց անտարբեր, գնացէք. Ալի աղա, տուր գրանց երկուական թուման սակի:

Խորը մտածմունքի մէջ ընկաւ շահը:

— Արդեօք բանաստեղծ եմ ես, Աստուծոյ ընտրեալ, թէ թշւառ յանգերգող, անտաղանդ գրիչ:

Եւ ինչ, եթէ նրանք բոլորը երեսիս խոնահւում են, յետևիցս, իրենց հարեմներում ինձ ծաղրում: Ինձ մօտ երգիս տողերը դրախտական վզնոցի մարգարիտ համարում, տանը գորտի հոկոց անւանում:

— Ում հարցնել, ում հետ խորհրդակցել, ուր գտնել մարդու և ոչ սարկի:

Պէտք է կանչել ինձ մօտ մեծ կնիքի պա-

հապան Հաջի Աբու-Թորաթին, որի անունը յայտնի է ամբողջ աշխարհին, նրա ուղղամտութեան մասին խօսում են Իրանի սահմաններից շատ ու շատ հեռու, նրան ճանաչում են Քէրքէլի և Նէջէֆի սուրբ հոյրերը—մուշտէիդները, փառաբանում են նրան և թափառական կիսաքաղց գերվիշները, որ շրջում են Հիմալայեան կիրճերում:

—Եյ, ծառաներ, կանչեցէք Հաջի Աբու-Թորաթին, Իրանի կնիքի պահապանին:

—Ահա նա կարող է ինձ խորհուրդ տալ, իր անկեղծ խօսքն ասել.

Նա չի վախում իմ բարկութիւնից, որովհետև նրա մէջ դեռ չի մարել մաքրութեան և քանականութեան ջահը, որ վառել է նրա սրտում ծննդեան բոպէին երկնքի հրեշտակը:

Տիրեց նորից լոռութիւն:

—Դու ես կանչել ինձ, ուղղափառների հզօր տէր,—ասաց կնիքի պահապանը՝ խոր գլուխ տալով շահին:

—Այս. իմ բարեկամ. բայց քեզ կանչել եմ ոչ իբրև հաւատարիմ ծառայի, ոչ որպէս պետական գործերի փորձառու խորհրդականի. ես քեզ կանչել եմ ինչպէս ազնիւ մարդու: Զեմ ուզում լսել բարդ շոքմոքութիւն, սպասում եմ ազատ, համարձակ խօսքի, ճշգրիտ գնահատման Կըկարդամ քեզ իմ վերջին պօէման «Լացող վարդենու» մասին:

—Տիեզերքի հրամայող, քո ծառայ Աբու-

Թորաբը բանաստեղծ չէ. նա հեղ իմաստասէլք է—փիլիսոփիայ. նա անկարող է ըմբռնել այն ալմաստների ամբողջ գեղեցկութիւնը, որ աստւածատուր ոգեսորութեան թելի վրայ այնքան քմահաճ շարել է տաղանդաւոր ձեռքը:

—Ո՞չ, ծեր հաջի. դու իմաստասէլք ես. իսկ ամեն մի իմաստասէլք բանաստեղծ է.

Ականջ դիր ինձ և անվախ ասա քո ձըշմարիտ խօսքը:

—Աշխարհի տէր, դու զիտես հաջի Աբութիորաբին. ստութեան օձի խայթը դեռ չի պղծել նրա շրթունքները:

—Դէհ, ինչ կասես, իմ բարեկամ, ասաց շահը հաջուն վերջացնելով պօէմայի ընթերցումը:

—Գեղեցիկ յանգեր, հնչեղ տողեր, իմ տէր:

—Իսկ պօէմայի ոգին. միթէ դու չհասկացար նրա գլխաւոր միտքը: Միթէ Սայադի երկերի մէջ կայ այդպիսի մի խոր գաղափար:

—Ներիր ինձ, տիեզերքի լուսատու. Սայադը Արևելքի առաջին բանաստեղծն է. նա ունի...

—Ուզում ես ասել Սայադը բա՞րձր է ինձանից, —վեր թռաւ տեղից ցասկոտ շահը:

—Բարձր է, իրանի հզօր կառավարիչ, —ոտքի ելաւ ծերունի իմաստասէրը:

—Իռւրա այստեղից, անիծւածի ծնունդ, —ասաց շահը և նետեց հաջու յետեկից դալմաղանը (թանաքամանը):

—Տարէք դրան մլականոց, ծառաներ:

Խորապէս խոցոտւել էր իրանի ամենամեծ
բանաստեղծի ինքնասիրութիւնը...

— Զլսւած յանդգնութիւն,—հերհե խփում էր
գրգռւած սիրտը.

— Ինչպիսի յանդգնութիւն—կրկնում էր
բորբոքւած ուղեղը.

— Յանդգնութիւն—կրկնում էին պատերը
շահի ամեն քայլի հետ:

—
Ամբողջ գիշերը շահը բարկութիւնից չկա-
րողացաւ քննել: Որպի նման կռծում էր նրա
սիրտն այն միտքը, թէ ինչու այնպէս վիրաւո-
րեց իր հաւատարիմ Աբու-Թորաբին:

Հրաման արձակեց իրանի տէրը հանել
Աբու-Թորաբին մութ նկուղից, իր ոսկեզօծ հան-
դիսական կառքով, գլխաւոր ախոռապանի զեկա-
վարութեամբ տանել տուն և յանձնել նրան իր
ալմաստ մատանին:

Առաջ դուրս եկաւ շահը պարտէզ. ճեմում
էր ծառուղիով և յուղւած ինքն իր հն հարցնում.

— Մի՞թէ ես տաղանդ չեմ. մի՞թէ այս բու-
լորը լոկ ինքնախարէութիւն է: Զեմ հաւատում:

Դարձաւ շահը իր գրասենեակը, բաց արեց
արկղիկներից մէկը և սկսեց վնասոել. վեր ա-
ռաւ թղթերի մի կապոց, որ խնամքով փաթաթած
էր, բաց արեց ու սկսեց կարդալ—իր նախկին
բանաստեղծութիւններն էին: Երկար կարդում
էր իր ծանօթ սիրելի տողերը:

Բանաստեղծը—բարձր է թագաւորից—

տնցնում է նրա մտքից մի անորոշ կայծ. բա-
նաստեղծութեան շնորհքը ի վերուստ է, թագա-
ւորին մարդիկ են կարգում...

Բանաստեղծութեան լնթերցումը հանգըս-
տացնում է շահի վրդովւած հոգին. նա տարւում
է դրանով. աւելի ու աւելի համոզւում, որ ինքը
բանաստեղծ է.

— Այս, ես բանաստեղծ եմ: Զեմ հաւատում
շողոքութներին, բայց անպայման ես բանա-
ստեղծ եմ:

Անցան շահի մոայլ մտքերը, խաղաղւեց
հոգին: Այդ օրը ոչ մի մահւան վճիռ չէր ստո-
րագրել, ոչ ոքից կոյք չէր խլւել և ոչ ոք մութ
նկուղ չէր լնկել:

— Եյ ծառաներ, կանչեցէք հաջի Աբու-
Թորաբին, պետական կնիքի պահապանին:

Իզուր երեկ ես վիրաւորեցի այդ ծերու-
նուն: Նա ինձ հասկացաւ. նա բանաստեղծ չէ,
նրա համար անմատչելի են բանաստեղծութեան
բոլոր նրբութիւնները. խորհրդաւոր գաղափարի
ելեէջերը:

— Շնորհակալ եմ քո մեծ ողորմութեան
համար, տէր, — ասաց հաջին և բարձրացաւ
մարմարիոնէ աստիճաններով վեր:

— Մոռացիր, իմ ճշմարիտ բարեկամ, այն
վիրաւորանքը, որին դու արժանի չէիր, — անսո-
վոր լնքուշութեամբ հնչում են այն մարդու
խօսքերը, որի առաջ դողում է ամբողջ Արկելքը՝
սկսած Գանգէսից մինչև նեղոս:

— Նստիր մօսս, իմ հաւատարիմ բարեկամ.
ուզում եմ ապացուցանել, որ դու երեկ սխալ-
ւեցիր։ Սայադը բարձր չէ ինձանից։

— Այս բոպէիս կըկարդամ քեզ այն, ինչ
պահել էի արկղումս. դա «Թիթեռնիկի և վարդի
երգն է»։

Կնիքի ծեր պահապանը հանդարա դրեց
շահի ոտքերի մօտ իրեն նւիրած ալմաստէ մա-
տանին ու ասաց.

— Աշխարհի ամենամեծ լուսատու, թոյլ
տուր ամենից առաջ, վերջին հրաժեշտը տալ
կնոջս ու զաւակներիս…

— Գնա, գնա տուն, յամառ ծերունի, — յու-
սահատ թափ տւեց ձեռքը նա, որի մի նշանով
ծաղկեալ երկիրներն էին անապատ դառնում, —
գնա…

Այդպէս է թագաւորի դառն վիճակը. նրանց
մօտ կարող են ազատ ազրել միայն թշւառ շո-
ղոքորթները…

Տիեզերքի հրամայողը, ահաւոր շահը գլուխը
ցած ձգեց. հասկացաւ, որ ինքը չէ փառապանծ
իրանի ամենամեծ բանաստեղծը։

Ա Ն Տ Ա Ռ Ի Դ Շ Խ Ո Ւ Ն

(Մալախևա-Միրովիչից)

Ապրում էր աշխարհում մի դժբոյ, որը
բաժանեց մարդկանց իր բոլոր ունեցածը: Նա
ոչոքի մերժել չէր կարողանում, և ամեն Աստ-
ծոյ օր, սկսած այն օրից, երբ նա որբացաւ ու
ապրում էր հին ամրոցում իր դայեակի հետ՝ օր
ու գիշեր խոնւում էին նրա շէմքի առաջ օգ-
նութեան կարօտ մարդիկ:

Նա վաղուց ուրիշներին էր տւել իր պար-
տէզները, խաղողի այգիներն ու դաշտերը, իր
մարդարտեհուռ շորերն ու բոլոր թանկագին քա-
րերը, իր բոլոր ոսկէ ու արծաթէ փողերը, ինչ-
քան էլ որ ունէր նաև նրա պալատը դատարկ-
ւեց, որովհեակ նա բաժանել էր և դրա բոլոր
զարդարանքները:

—Հրէս, գալիս է մի ծեր մուրացկանունի,
ամբողջովին ցնցուիներում — ասաց դժբոն —
իսկ ես էլ ոչ մի հատ դրամ, էլ ոչ մի շոր չու-
նեմ, որ նրան տամ:

—Քո սպիտակամորթ սամոյը կարելի է
նրան տալ — ծաղրանքով ասաց պառաւ դայեա-
կը, որը արցունքով ու վշտով էր տեսնում միշտ՝
թէ ինչպէս դժբոն բաժանում էր ուրիշնե-
րին հին ամրոցի բոլոր գանձերը: Տնւը, իսկա-
պէս, այդ մուրացկանունիուն և ոսկէ թաղդ ու
մանեակդ, և այն արծաթէ օրորոցը, որի մէջ

քեզ օրօրել եմ, և դուքս եկ ինքդ աշխարհ դառ
ու դատարկ:

— Իսկապէս որ, ես սամոյըը մոռացել էի—
ասաց դշխոն: — Տար, տուր այն, պառաւին:—
Օրօրոցը քեզ է պատկանում, որովհետեւ կար մի
ժամանակ, որ դու օրեր ու գիշերներ օրօրում
էիր այն: Իսկ թագն ու մանեակը, ես ոչ ոքի
տալ չեմ կարող, որովհետեւ գրանք իմ հօրս ու
մօրս ընծաներն են, որոնց խոստացել եմ ես՝
պահել մինչեւ իմ մահս, իբրև յիշատակ:

Այդ գիշեր դշխոն մտաւ խոհանոց քնած
աղախնի մօտ, հագաւ նրա շորերը ու տեղը թո-
ղեց իր թաւշէ ու խառ շորերը. վերցրեց մի
հին տոպրակ ու նրա մէջ դնելով թագն ու թան-
կագին ալմաստէ մանեակը՝ ծպտուն հեռացաւ
ամրոցից:

Նա հաց էր խնդրում այն մարդկանց պա-
տուհանների տակ, որոնց ինքը խաղողի այգին-
եր էր նւիրել: Ոչ ոք չէր ձանաչում ոտարո-
բիկ, թաշկինակը աչքերին քաշած, աղախնի աղ-
քատիկ շորերում, ու մուրացիկի պայուսակով
դշխոյին. երբ նրան հաց չէին տալիս ու կո-
պիտ ասում էին.

— Գնա, հեռացիր.— նա ձեռք էր տալիս իր
պայուսակին, որի մէջ էին թագն ու մանեակը,
ու ժպտում:

Նա գիտէր որ, եթէ միայն ուզենար հանել
գրանք իր տոպրակից, այդ մարդիկ նրա առաջ
կընկնէին ծնկաչոք ու ներումն կաղերսէին: Բայց

պէտք չէր այդ նրան, ու նա լուռ ժպտով անցանում էր միայն քաղաքների ու գիւղերի միջով:

Գնաց նա մի հեռաւոր ու խիտ անտառ, որտեղ ուզում էր ծառերի, թռչունների ու աստղերի հետ ապրել: Բայց ապրել այն մարդկանց մէջ, որոնց նա սովոր էր միշտ բաշխել, հիմա տիսուր կըլինէր—էլ ոչինչ չունէր նրանց տալու:

Մի անգամ դշխոն նստեց իր ճամբին հանդիպած անտառում՝ հանգստանալու:

Նրա շուրջը լուռ էր ու դատարկ. մտածեց դշխոն, որ այգտեղ նրան ոչ ոք չի տեսնի ու վերցրեց նա զլիսի թաշկինակը և նրա ոսկէ վարսերը փուեցին մինչև գետին:

Յանկարծ ծառերի միջից երևաց մի սպիտակ նժոյգ ու նրա վրայ մի արքայազն, գեղեցիկ, ինչպէս բոլորած լուսին:

— Ի՞նչ ես անում այստեղ, իմ անտառում, ով ոսկեգանգուր գեղեցկուհի—հարցրեց արքայազնը դշխոյին:

— Ես չգիտէի, թէ դու ես մեծացրել այս անտառի ծառերը,—ասաց դշխոն. ես կարծում էի, թէ սա, գետինը, արեն ու անձրեն են մեծացրել:

Արքայազնը շփոթեց:

— Ո՞վ էլ մեծացրած լինի, ոսկեգանգուր գեղեցկուհի, ես շատ ուրախ եմ միայն, որ պատահեցի քեզ նրանց տակ—ասաց արքայազնը:

Պայուսակիցդ երեսում է, որ դու ողօրմութիւն ես հաւաքում. ահա քեզ իմ թագից ա-

մենամեծ գոհարը, վերցրու սա, իբրև յիշատակ մեր հանդիպման։

— Զէ, ասաց Դշխոն — ես մարդկանցից միայն հաց ու ջուր եմ վերցնում։ Եթէ կարող ես, քո ջրամանից ինձ մի կում ջուր տուր, ես վաղուց եմ ծարաւ։

Դշխոն խմեց կշտացաւ ու հանեց իր մանեակից, արքայազնի թագի գոհարից երկու անդամ մեծ մի գոհար և ասաց.

— Ա՛ռ, սա՞ շնորհակալութեանս փոխարէն, որ ինձ կշտացըիր։

Արքայազնը զարմացաւ, նա չուզեց գոհարը վերցնել.

— Ես քո գոհարը կվերցնեմ միայն այն ժամանակ — ասաց նա — եթէ դու վերցնես փոխարէնը իմ թագը և դառնաս իմ կինը, ու գլշխոն իմ երկրի։

— Ես այսպէս էլ դշխոյ եմ — պատասխանեց գեղեցկուհին — ես էլ ունեմ իմ ոսկէ թագը, բայց ես այն իմ պայուսակումս եմ կրում։

Ինչքան էլ խնդրեց նրան արքայազնը, որ իր հետ գնայ իւր թագաւորութիւնը՝ նա չհամաձայնեց.

— Այստեղ հօ երկար չեմ թագաւորելու — ասաց դշխոն։ Քո երկրումն էլ, երեխ թշւառները շատ են։ Եթէ դռւ չթողնես, որ ես նրանց բաժանեմ իմ բոլոր թանկութիւնները, ինչպէս սովորել եմ անել իմ երկրում։ Ես կատեմ իմ ոսկեայ զարդարանքներս ու թանգարժէք հանդերձներս, ծանր

ու խեղդիչ կդառնայ ինձ համար քո պալատը:
իսկ եթէ թողնես՝ ես բոլորը կըբաժանեմ և
դարձեալ այս պայուսակով կըգամ այս անտառը:
Աւելի լաւ է դու ինքդ, իբրև յիշատակ իմ մա-
սին, բաժանիր ինչ որ կարող ես, իսկ ինձ՝ թող
այստեղ:

Բաժանւեց նրանից արքայազնը, ու մտած-
կոտ գնաց իր ճամբով։ Իսկ գշոռն մտաւ
բոլորովին անտառի խորքը, իր համար մի կա-
ցարան շինեց այնտիղ կանաչ ճիւղերից ու սկսեց
ապրել նրանում։ Նա մի անկիւնում դրաւ պա-
յուսակը, կախեց նրա վերել ոսկի թագը ու իր
համար անկողին շինեց կանաչ խոտից։ Առաւօտ-
ները նա մորի էր քաղում, իսկ կէսօրին մեղր
էր բերում նրա համար արջը վայրի փեթակ-
ներից։ Նրա բնակարանի վերել բուն հիւսեց
սոխակը, սունկերը աճեցին բարձրացան հէնց
նրա տան առաջը, որ շուտ նրա տչքովն ընկնեն։
Անտառը սիրեց նրան, ու նա էլ սիրեց ան-
տառին։

Մի անգամ, ամառայ մի շոք օր, տերե-
ների շշուկի տակ, իր բնակարանում նստած՝
ննջեց նա։ Այդ ժամանակ անցնում էր մի վհուկ.
Նա տեսաւ քնած դշխոյին ու նրա կրծքին՝
ծանր գոհարէ մանեակը։

— Խեղճ գեղեցկուհի — ասաց նա ինքն ի-
րեն — նա նման է ծաղկի, զարդարւած քարե-
ղէններով։

Միթէ աւելի լաւ չի լինի, որ այս թան-

կագին քարերը ցող դառնան: Այս էլ գեղեցիկ կլինի ու բոլորովին թեթև և, բացի դրանից, նա ինքն էլ աւելի կըզովանայ:

Ու նա դիպաւ կախարդական գաւազանով
մանեակին, բայց անսպասելի կերպով դաւա-
զանը սահեց ու կզաւ դշխոյի պարանոցին ու
դշխոյն իր մանեակի հետ միասին դարձաւ
ցօղի մի գոհարէ կաթիլ. նա շողաց երեք ան-
դամ, կապոյտ, մանիշակագոյն ու կարմիր բո-
ցով և յագեցրեց քնակարանի մուտքի մօտի այն
ծաղկին, որը պապակւում էր ծարաւից, ու դշշ-
խոյի հէքիաթը վերջացաւ:

Դշտոյի կացարանի վրայ թեքւած կեչի-
ները այսպէս վշտացան նրա համար, որ անտառ
ոի կախարդը խղճաց նրանց և որպէսզի սփոփի,
նա իբրև յիշատակ, նրանց նւիրեց դշտոյի
ոսկէ թագը, և նրանք էլ ոսկեզօծեցին նրանով
իրենց տերեւները:

ԵՐԵ ԵՐԵԽԱՆԵՐԸ անտառ եկան՝ սսացին.

Ոսկե աշունը եկաւ:



ՀԲՈՏ. ԹԳ. Օ. ԲՈԼԵՐՈՒՄԿԱՆԴ

Հոյ ազագրութեան 400 իւ սառերի գիւտի 1500-ամեայ
յօքելեանի լիւտակին

- | | |
|--|-------|
| 1) Կորած Սարը և
Ուկէ Կուռքի գանձը | 20 լ. |
| 2) Փոքրիկ պատմւածքներ | 20 լ. |
| 3) Գորիլլա և ուրիշ պատմւածքներ | 20 լ. |

Մամուլի առկ է

- 4) Երեք պատմւածք:

